

Ա.Մ. ՍԱՐՅԱՆ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ
ՍՈՎԵՏԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՄՂՎՈՂ ՊԱՅԻՐԱՐՈՒՄ







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы

С.М. САРЬЯН

ПОСЛЕВОЕННАЯ
АРМЯНСКАЯ СОВЕТСКАЯ
ЛИТЕРАТУРА
В БОРЬБЕ ЗА МИР



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Ереван 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Գրականության ինստիտուտ

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961 թ.

891.99.09

Ա-25

Ս.Մ. ՍԱՐՅԱՆ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ
ՍՈՎԵՏԱՔԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՄԴՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

24273
A II
31184



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Երևան 1954

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-Հրատարակչական խորհրդի որոշմամբ:



1917 թ. հոկտեմբերին, երբ Ռուսաստանում հաղթանակեց Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան, առաջին խոսքը, որով նորածին պետությունն իր հանձարեղ հիմնադիր Լենինի շուրթերով դիմեց ողջ աշխարհի ժողովուրդներին՝ Հաշտության դեկրետն էր, իր աշխատանքի տերը դարձած աշխատավոր ժողովրդի խոսքը՝ խաղաղության մասին: Նյութական և հոգևոր հարստություններ ստեղծող աշխատավոր ժողովուրդն առաջին անգամ պատմության մեջ սովետական երկրում դարձավ իր աշխատանքի և վաստակի տերը, երկրի արժանավոր տնօրենը: Ստեղծվեցին ռեալ հնարավորություններ խաղաղ և ստեղծարար աշխատանքի համար, սոցիալիզմի հաղթանակի համար, սոցիալիզմի երկիրը խաղաղության պատվար դարձնելու համար:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում սովետական երկիրը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ դառնում է խոշոր արդյունաբերության և սոցիալիստական դյուդատնտեսության հզոր տերություն, ողջ աշխարհի ժողովուրդների խաղաղության անառիկ ամրոց:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ուխտադրուժ թշնամին հարձակում գործեց Սովետական Միության խաղաղ սահմանների վրա, ողջ սովետական ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի ելավ թշնամու դեմ և, պատմության մեջ չսված հե-

րոսամարտերում ջախջախիչ հարված հասցնելով գերմանական Ֆաշիզմին և յապոնական իմպերիալիզմին, փրկեց կործանումից Նվրոպայի, Ասիայի ու ողջ աշխարհի քաղաքակրթությունը:

Պատմության մեջ չսված այդ հաղթանակի շնորհիվ ստեղծվեց դեմոկրատիայի և խաղաղության անպարտելի լազերը Սովետական Միության գլխավորությամբ: Այդ լազերը միավորում է ամբողջ երկրագնդի ազգաբնակչության մեկ երրորդից ավելին՝ Սովետական Միությունը, Չինական ժողովրդական Ռեսպուբլիկան, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկան, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Ալբանիայի ժողովրդական դեմոկրատական երկրները, Կորեական ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկան, Մոնղոլական ժողովրդական Ռեսպուբլիկան և Վյետնամի երիտասարդ Դեմոկրատական Ռեսպուբլիկան:

Սոցիալիզմի և դեմոկրատիայի նվաճումներից զազաժ Ամերիկայի և Անգլիայի կառավարող ռեակցիոն շրջանները սկսում են նյութել նոր համաշխարհային պատերազմ՝ Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ, պատերազմ՝ աշխարհի ազատասեր և խաղաղասեր ժողովուրդների դեմ:

Աշխարհի խաղաղասեր ժողովուրդները Սովետական Միության մեջ ակնառու կերպով տեսնելով խաղաղության և դեմոկրատիայի միակ հետևողական պաշտպանին անկախ ազգությունից, քաղաքական հայացքներից, պարտիականությունից և դավանանքից, համախմբվում են Սովետական Միության բարձրացրած խաղաղության և դեմոկրատիայի դրոշի շուրջը և սկիզբ դնում համաշխարհային պատմության մեջ չտեսնված

համաժողովրդական շարժմանը՝ խաղաղության ժամանակակից շարժմանը:

Պաշարելով խաղաղության և դեմոկրատիայի լազերի դեմ, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները 1949 թ. ապրիլին կազմում են «Հյուսիս-Ատլանտյան ազդեցիվ բլոկը», որի մեջ ԱՄՆ-ի և Անգլիայի գլխավորությամբ մտնում է 12 պետություն: Այս բլոկին այնուհետև միանում են նաև Հունաստանը և Թյուրքիան: «Հյուսիս-Ատլանտյան բլոկը» սկսում է բացահայտ պատերազմ նախապատրաստել ՍՍՌՄ և ժողովրդա-դեմոկրատական երկրների դեմ:

ԱՄՆ-ի իմպերիալիստները 1950 թ. կազմակերպում են Լի-Սին-Մանի մարիոնետային կառավարության հարձակումը Կորեական ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկայի վրա:

1951 թ. հոկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը ստորագրում է «1951 թ. օրենքը անվտանգության փոխադարձ ապահովության մասին», որով նախատեսվում է Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատական երկրների ներսում դիվերսիոն գործունեություն ծավալելու համար հատկացնել 100 միլիոն դոլլար:

1952 թ. մայիսի 26-ին Բոննում սեպարատ դաշինք է կնքվում մի կողմից ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների և մյուս կողմից Բոննի «կառավարության»՝ Արևմտյան Գերմանիայի ռևանշիստական ղեկավար շրջանների միջև: Արևմտյան Գերմանիան փաստորեն վերածվում է ռազմական պլացդարմի՝ Սովետական Միության և ժողովրդա-դեմոկրատական երկրների ժողովուրդների դեմ:

համաժողովրդական շարժմանը՝ խաղաղության ժամանակակից շարժմանը:

Պայքարելով խաղաղության և դեմոկրատիայի լազերի դեմ, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները 1949 թ. ապրիլին կազմում են «Հյուսիս-Ատլանտյան ագրեսիվ բլոկը», որի մեջ ԱՄՆ-ի և Անգլիայի գլխավորությամբ մտնում է 12 պետություն: Այս բլոկին այնուհետև միանում են նաև Հունաստանը և Բյուրքիան: «Հյուսիս-Ատլանտյան բլոկը» սկսում է բացահայտ պատերազմ նախապատրաստել ՍՍՌՄ և ժողովրդա-դեմոկրատական երկրների դեմ:

ԱՄՆ-ի իմպերիալիստները 1950 թ. կազմակերպում են Լի-Սին-Մանի մարիոնետային կառավարության հարձակումը Կորեական ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկայի վրա:

1951 թ. հոկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը ստորագրում է «1951 թ. օրենքը անվտանգության փոխադարձ ապահովության մասին», որով նախատեսվում է Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատական երկրների ներսում դիվերսիոն գործունեություն ծավալելու համար հատկացնել 100 միլիոն դոլլար:

1952 թ. մայիսի 26-ին Բոննում սեպարատ դաշինք է կնքվում մի կողմից ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների և մյուս կողմից Բոննի «կառավարության»՝ Արևմտյան Գերմանիայի ունանշխտական ղեկավար շրջանների միջև: Արևմտյան Գերմանիան փաստորեն վերածվում է ռազմական պլացդարմի՝ Սովետական Միության և ժողովրդա-դեմոկրատական երկրների ժողովուրդների դեմ:

Խաղաղության և դեմոկրատիայի լազերի 1953 թ. ձեռք բերած հաջողությունները՝ Կորեայում զինադադարի ստորագրումը, Բեռլինի պրովոկացիոն ավանտյուրայի վիժեցումը, մի խումբ ստոր դավադիրների մերկացումը փայլուն նվաճումներ են համաշխարհային պատերազմի կանխման համար մղվող պայքարի գործում:

Լարվածության աճման երկարատև շրջանից հետո ակնառու կերպով իրեն զգալ է տալիս միջազգային հարաբերությունների լարվածության թուլացումը: Սովետական Միությունն այսօր ավելի, քան երբևէ, հզոր է ու անպարտելի և՛ ժողովրդական տնտեսության, և՛ տեխնիկայի, և՛ թե կուլտուրայի ասպարեզում ձեռք բերած իր ակնհայտ նվաճումներով:

Սովետական կառավարության թե՛ արտաքին քաղաքականության հիմքում, որի գլխավոր գիծը խաղաղության պաշտպանությունն է, և թե՛ ներքին քաղաքականության հիմքում, որի հիմնական խնդիրը ժողովրդի բարօրությունն է, ընկած է մեծագույն հոգատարությունը դեպի ժողովրդական ամենալայն մասսաները, դեպի նրանց ներկան ու ապագան: Պատմական նշանակություն ունեն Սովետական Միության Կոմունիստական պարտիայի վերջին որոշումները և նամանավանդ Կենտրոնական Կոմիտեի Սեպտեմբերյան պլենումի որոշումները, որոնք նոր էտապ են նշանավորում սովետական էկոնոմիկայի զարգացման և հետագա ամրապնդման ասպարեզում, սովետական երկրի աշխատավոր մասսաների՝ բանվորների, կոլտնտեսականների և ինտելիգենցիայի նյութական բարեկեցության քարելավման գործում: Այդ ամենն ավելի հզոր է դարձ-

նում խաղաղության բանակը, նոր հորիզոններ բանալով նրա հաղթարշավի առջև:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ սեսիայում ունեցած իր ելույթում Գ. Մ. Մալենկովն ընդգծելով, որ Սովետական կառավարության և բոլոր սովետական մարդկանց համար խաղաղությունն ամրապնդելու և ժողովուրդների անվտանգությունն ապահովելու գործը ոչ թե տակտիկայի և դիվանագիտական մանևրների հարց է, այլ գլխավոր գիծ արտաքին քաղաքականության բնագավառում, ասաց. «Ուլ չի հասկանում, որ չի կարելի դեմոկրատական լագերի երկրների ժողովուրդների մեծ ընտանիքը կազմող 800 միլիոն մարդկանց ստիպել հրաժարվելու իրենց արյունով ու քրտինքով ձեռք բերած պատմական նվաճումներից, հրաժարվելու իրենց սեփական ժողովրդական իշխանությունից և վերականգնելու շահագործողների իշխանությունը, նա իրեն պարզապես հիմար դրության մեջ է դնում: Ամբողջ աշխարհին պարզ է, որ ագրեսիվ ուժերին չի հաջողվի ետ շրջել պատմության ընթացքը»¹:

ԱՄՆ-ի կառավարող շրջանները ճգնում են ետ շրջել պատմության ընթացքը, նախագծում են նոր համաշխարհային պատերազմ և այդ նպատակին են ծառայեցնում ժամանակակից բուրժուական ռեակցիոն կուտուրան ու գրականությունը:

Ինչպես որ մարդն իր պահանջմունքներով, որպես նպատակ ժամանակակից կապիտալիստական արտադրությունից «չքանում է», ինչպես ասում է Ի. Վ. Ստալինը, նույնպես և ժամանակակից բուրժուական կուլտուրայի և արվեստի մեջ մարդն իր հոգեկան

¹ Գ. Մ. Մալենկով, Ճառ ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ սեսիայում, Հայտնության, 1953, էջ 52:

հարուստ ներքնաշխարհով և ամբողջ գեղեցկությամբ խալառ դադարում է գոյություն ունենալուց: Մարդուն փոխարինում է ալկոհոլիկը, սեռական մոլուցքով տարված անասունը, ոչ մի ոճրագործության առջև կանգ չառնող զանգստերը և բանդիտը, մարդասպանը և դավաճանը, ունեգատը: Ահա ժամանակակից բուրժուական գրականության «հերոսները» ցանկը:

Ժողովրդական լայն մասսաների դեմ, մասսաներ, որոնք խաղաղություն են ցանկանում և, որոնք Սովետական Միության և Ժողովրդա-դեմոկրատական երկրների հանդեպ լցված են խորը համակրանքով, իմպերիալիստական դադափարախոսական էքսպանսիան գործադրում է «սառը զենքի» այնպիսի տեսակը, որպիսին դիմակավորված հոգեբանական դիվերսիան է: Եվ պատահական չէ, որ այս նպատակի համար նա օգտագործում է ունեգատների ոհմակը: Ուռլ-Ստրիտի մի կույտ մաքնատների ստոր լակեյները առաջին հերթին դառնում են հենց ամերիկյան ժողովրդի դավաճաններ. ամերիկյան գրողներ է. Հեմինգուեյը, է. Մինկլերը, Զ. Ստեյնբեկը, Օնիլը համալրում են հակաժողովրդական դեկադենտների դավաճանական այդ բանակը, որը «սառը պատերազմ» է մղում իր երկրի աշխատավորական մասսաների, Սովետական Միության, Ժողովրդա-դեմոկրատական երկրների և օրեցօր հզորացող խաղաղության լագերի դեմ:

Այդ դեկադենտական գրականության նպատակն է՝ մարդու մեջ դազանային բնազդներ արթնացնելով, մարդատյացություն, հուսահատություն և սեռական սանձարձակություն քարոզելով զինաթափել մասսաների կամբը, մթափնել նրանց գիտակցությունը, ստիպել

Նրանց հրաժարվելու սոցիալական պայքարից և դաս-
տիարակել ռենեգատներ ու դավաճաններ:

Զափաղանց բնորոշ է այդ տիպի զրականության
համար ամերիկյան դեկադենտ-գրող Օնիլի «Սառցա-
վաճառը մոտենում է» պիեսը (1946 թ.):

Պիեսի գործող անձերից մեկի՝ ռենեգատ Լարրիի
հետևյալ խոսքերը խտացրած կերպով արտահայտում
են դեկադենտական զրականության էությունը. «Այն
նյութը, — ասում է նա, — որից պետք է կառուցվի իդեա-
լական ազատ հասարակությունը՝ դա մարդն է, բայց
մի՞թե կարելի է մարմարյա տաճար կառուցել ցեխից և
աղբակույտից»:

Վայրահաշելով մարդու դեմ, մերժելով նրա պայ-
քարը հանուն սոցիալական ազատագրության, դե-
կադենտները հետապնդում են մի հիմնական նպա-
տակ՝ պահպանել իմպերիալիզմի խարխուլող հիմքերը,
ժողովրդական մասսաներին թունավորել բուրժուական
կարգերի հանդեպ պասսիվ հնազանդության թուլյամբ:

Պատահական չէ, որ այդ ոհմակին է միացել նաև
կոսմոպոլիտ, իր խիղճն ու հոգին իմպերիալիստներին
և նրանց ստոր լակեյներ դաշնակներին վաճառած Վիլ-
յամ Սարոյանը:

Եթե երկրորդ համաշխարհային պատերազմի ժա-
մանակ դաշնակցությունը մտել էր դերմանական ֆա-
շիզմի ծառայության մեջ, ապա այսօր նա դառնալով
ամերիկա-անգլիական իմպերիալիստների կամակա-
տարը, փառաբանում է Վիլյամ Սարոյանի նման պրո-
վոկատորներին:

Վիլյամ Սարոյանը քարոզում է հրաժարվել սոցիա-
լական պայքարից, հնազանդվել իշխող շարիքին, ան-
տրտունջ կերպով մասնակցել վերահաս «անխուսափելի»

պատերազմին, դուրս մղել բանականությունը և հանձնել կրքերի հորձանքին:

Այսպիսով, գրականությունը Վիլյամ Սարոյանի և այլ դեկադենտների ձեռքում վերածվում է ժողովրդական մասսաների գիտակցությունը թունավորող հաշիշի, այդ մասսաներին պատերազմի հլու-հնազանդ, «Թնդանոթի միս» դարձնելու միջոցի:

Սակայն, հակառակ դրան, ԱՄՆ-ի ներսում ծավալվում և զարգանում է հասարակ մարդկանց պայքարը հանուն խաղաղության ու դեմոկրատիայի, ընդդեմ նոր համաշխարհային պատերազմի:

Այդ մասին ընկեր Մալենկովը Հոկտեմբերյան Մեծ ռեյուցիայի 32-րդ տարեդարձի առթիվ արտասանած իր ճառում ասաց.

«Անցել է այն ժամանակը, երբ պատերազմի հրդիպներին հաջողվում էր հիմարացնել ամերիկյան ժողովրդին նրանով, թե իբր նա պատերազմի ծանր զոհաբերությունները չի կրի, թե իբր պատերազմի համար բավականաչափ Թնդանոթային միս կգտնվի Եվրոպայում և Ասիայում: Ամերիկյան ժողովուրդը սկսում է հասկանալ, որ հասել է այնպիսի ժամանակ, երբ իմպերիալիստները չեն կարող պատերազմել միայն ուրիշ ժողովուրդների ձեռքով: Ամերիկյան ժողովուրդը սկսում է հասկանալ, որ եթե պատերազմի հրդիպները կազմակերպեն մարդկանց նոր սպանդ, ապա մայրերի, կանանց, քույրերի, երեխաների վիշտը կայցելի նաև ամերիկյան մայր ցամաքը: Իսկ դա սարսափելի վիշտ է: Այդ վշտի մեջ անխուսափելիորեն շնչասպառ կլինեն և կխեղդվեն պատերազմի հրդիպները»¹:

¹ «Պարտիական կյանք», № 11, 1949, էջ 11:

Ճիշտ է, ԱՄՆ-ում ժողովրդական լայն մասսաները դեռ չեն ծավալել իրենց ուժերին համապատասխանող հանուն խաղաղության, համաժողովրդական կազմակերպված պայքար, սակայն ամերիկյան ժողովուրդը արթնանում է: Ամերիկյան պրոգրեսիվ գրողներ Ալբերտ Մալցը, Հովարդ Ֆաստը, Ալեքսանդր Սակստոնը, Ալբերտ Կանը և շատ ուրիշներ, շարունակելով Դրաշ-զերի տրադիցիաները, որպես ամերիկյան իմպերիալիզմի դիշատիչ էությունը մերկացնող ուժի ստորոշներ, մեծապես օգնում են ամերիկյան ժողովրդի գիտակցության արթնացմանը:

Իմպերիալիստական ծրագրերի և նրանց կենսագործման միջև կա մի անանցանելի պատնեշ — դա խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի ամենահաղթ լազերն է, Ի. Էրենբուրգի արտահայտությամբ՝ վեցերորդ մեծ տերությունը:

Խաղաղության պաշտպանության կուլտուրայի գործիչների կոնգրեսը՝ Վրոցլավում (Լեհաստան) 1948 թ., Խաղաղության պաշտպանության կողմնակիցների առաջին կոնգրեսը՝ Փարիզում և Պրագայում 1949 թ., Խաղաղության պաշտպանության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական Կոմիտեի ստեղծումը, Խաղաղության կողմնակիցների երկրորդ Համաշխարհային կոնգրեսը Վարշավայում, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի ստեղծումը և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան Բուդապեշտում 1953 թվականի հունիսին — Խաղաղության ժամանակակից շարժման հերոսական էտապներն են, որոնք կազմակերպում են աշխարհի հարյուր միլիոնավոր մարդկանց պայքարը հանուն խաղաղության: Բավական է նշել այն հանգամանքը, որ եթե 1948 թ. Վրոցլավի կոնգրեսում

մասնակցում էին Հինգ հարյուր դելեգատ, ապա 1952 թ. Վիեննայի կոնգրեսում՝ 2500 դելեգատ: Այդ թվական աճը ցույց է տալիս, թե ինչքան է լայնացել, զարգացել և հզորացել խաղաղության ժամանակակից շարժումը, ի հակադրություն նոր համաշխարհային պատերազմ ծրագրող ամերիկա-անգլիական իմպերիալիստների ծրագրերի:

Այն հզոր փաստը, որ Ստոկհոլմի կոչի տակ ստորագրեցին 500 միլիոն, իսկ 5 մեծ տերությունների միջև հաղաղության Պակտ կնքելու պահանջով Կոչի տակ՝ 600 միլիոն մարդուց ավելի, հանդիսանում է խաղաղության պաշտպանության դեմոկրատական այդ շարժման անպարտելիության ցուցանիշը:

1951 թ. մարտ ամսին ՍՍՌՄ Գերագույն Սովետը հաստատում է «Օրենք խաղաղության պաշտպանության մասին»: Սովետական պետությունն առաջինն է համաշխարհային պատմության մեջ, որը խաղաղությունը հաստատում է որպես պետական օրենք:

Խաղաղության ժամանակակից շարժման լայնացման և խորացման կարևոր ուղենիշ հանդիսացավ նաև 1952 թ. դեկտեմբերին Վիեննայում կայացած հաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը: «Ժողովուրդները, — հայտարարեց կոնգրեսը իր կոչում, — ցանկանում են խաղաղության մեջ ապրել, անկախ այն բանից, թե ինչպիսին է նրանց երկրների հասարակարգը և ինչպիսին է նրանց բարձրագույն իդեալը: Պատերազմն ատելի է բոլոր ժողովուրդների համար, պատերազմն իր ստվերն է գցում մարդկության բոլոր օրրանների վրա: Ժողովուրդները կարող են փոխել իրադարձությունների ընթացքը, մարդկանց վերադարձնել նրանց

վստահությունն այն բանում, որ վաղվա օրը լինելու է խաղաղ»¹:

Պաշքարը հանուն խաղաղության բացահայտում է ամերիկա-անգլիական իմպերիալիստների դիշատիչ էությունը և ցույց տալիս, որ խաղաղության հետևողական պաշտպանության դիրքերում ինչպես միշտ, այսօր էլ կանգնած է Սովետական Միությունը:

Խաղաղության ժամանակակից շարժման նշանաբանն են հանդիսանում Ի. Վ. Ստալինի հետևյալ խոսքերը. «Խաղաղությունը կապահպանվի և կամրապնդվի, եթե ժողովուրդները խաղաղության պահպանման դործը վերցնեն իրենց ձեռքը և այն պաշտպանեն մինչև վերջ: Պատերազմը կարող է դառնալ անխուսափելի, եթե պատերազմի հրձիգներին հաջողվի կեղծիքով մոլորեցնել ժողովրդական մասսաներին, նրանց խաբել և ներգրավել համաշխարհային նոր պատերազմի մեջ»²:

Սովետական Միության ժողովուրդներին՝ իրենց ավագ եղբոր՝ ուռա ժողովրդի ղեկավարությամբ ծավալած հերոսական պաշքարի շնորհիվ աշխարհի բոլոր ազատասեր և խաղաղասեր ժողովուրդներն ունեն այնպիսի ավանգարդ, որը կառուցում է աշխարհի ժողովուրդների խաղաղության աներեր և վստահելի ամրոցը՝ կոմունիզմը:

Եթե սոցիալիստական արտադրության նպատակը մարդն է՝ իր պահանջմունքներով, ապա սոցիալիստական արվեստի ու գրականության նպատակը՝ կոմունիզմ կառուցող մարդն է իր հարուստ ներքնաշխարհով,

¹ «Սովետական Հայաստան», 1952, դեկտեմբերի 23:

² Ի. Վ. Ստալինի զրույցը «Պրավդայի» թղթակցի հետ, «Սովետական Հայաստան», 17 փետրվարի 1951:

պայքարի և աշխատանքի մեջ բացահայտվող իր ողջ գեղեցկությամբ:

Այդ է պատճառը, որ սոցիալիստական հոմանիդմը հանդես է գալիս, որպես անցյալի հոմանիստական կուլտուրայի իսկական ժառանգորդ, որպես այդ կուլտուրայի միակ շարունակողն ու զարգացնողը:

Այդ է պատճառը, որ սովետական գրականությունը, որպես փարոս, լուսավորում է սոցիալիզմ կառուցող նոր դեմոկրատիայի երկրների ու ամբողջ աշխարհի առաջավոր գրականության ուղին:

Սովետական գրականությունն ընթանում է սոցիալիստական գրականության հիմնադիրներ՝ Գորկու և Մայակովսկու ուղիով, սոցիալիստական աշխատանքը, ժողովուրդների բարեկամությունը, սովետական հայրենասիրությունն ու խաղաղությունը հաստատող և իմպերիալիզմի ռազմատենչ էությունը հետևողական կերպով մերկացնող ու ժխտող մարտական տրադիցիաների զարգացման ուղիով:

Խաղաղության գաղափարը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեոլյուցիայի առաջին իսկ օրերից եղել է սովետական գրականության առաջատար գաղափարներից: Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, երբ ամբողջ աշխարհում ծայր առավ խաղաղության ժամանակակից շարժումը և ստեղծվեց խաղաղության ու դեմոկրատիայի լազերը ՍՍՌՄ գրված ավարտություն, սովետական գրականությունը դառնում է խաղաղության ժամանակակից շարժման գրողական կիրք:

Դեռ 1917 թ. Մայակովսկին «Ռեոլյուցիա» պոետո-խրոնիկայում գրում էր.



Վերջին հրանոթներն են որոտում արյունոտ վեճերում,
Վերջին ավիններն են հղկում գործարանները:
Մենք բոլորին կհարկադրենք վառողը շաղ տալու,
Մանուկներին կպարգենք նռնակ-գնդակները:

Դա վախը չէ, որ աղաղակում է գորշ շինելի տակ,
Դա ճիշդ չէ նրանց, ովքեր ուտելիք չունեն տանը.
Այդ վիթխարի ժողովրդի ձայնն է բարձրաղաղակ.
— Հավատում եմ
Մարդկային սրտի վեհությանը:

Այդ մարտերում ծեծկված փոշիներից վեր,
Բոլորից վեր, ովքեր կռվում էին սիրուց հիասթափված,
Այսօր
Սոցիալիստների հերետիկոսությունը մեծ
Իրականություն է դառնում շտեմնված:
(Թարգմ. Խ. Հրաչյան)

Մայակովսկին բանաստեղծական մեծ ուժով հաս-
տատում էր այն ճշմարտությունը, որ դալիս է բոլորո-
վին նոր, սոցիալիստական ռեոլյուցիա, որը աշխարհի
տնօրենը դարձնելով աշխատավոր մարդուն, վերջ կդնի
իմպերիալիստական պատերազմներին:

Արդեն «Վլադիմիր Իլյիչ Լենին» պոեմի հետևյալ
տողերը կարող են ծառայել որպես բնաբան սովետա-
կան խաղաղասիրական գրականության համար: Մա-
յակովսկու այդ տողերը վերաբերում են Լենինի գրած և
1917 թ. հոկտեմբերի 25 նոյեմբերի 7-ի գիշերը Սո-
վետների I Համառուսաստանյան համագումարում ըն-
դունված «Հաշտության դեկրետին»:

Իշխանությունը սովետներին:
Հողը գյուղացուն:
Խաղաղություն ժողովուրդներին:

Ռուս գրականության բացաժ ճանապարհով են ընթացել Սովետական Միության բոլոր ժողովուրդների գրականությունները, այդ թվում նաև սովետահայ գրականությունը: Ինչպես ողջ սովետական գրականության, նույնպես և սովետահայ գրականության համար սովետական մարդու խաղաղասիրությունը և հայրենասիրությունը եղել են առաջատար գաղափարներ: Նոր, սոցիալիստական հասարակարգի շինարարությունը Սովետական Միության ժողովուրդների մոտ օրգանապես կապված է նրանց խաղաղասիրության հետ:

Երբ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առավ խաղաղության ժամանակակից շարժումը և ստեղծվեց խաղաղության ու դեմոկրատիայի լագերը, սովետական գրականության առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ խաղաղության պաշտպանության պատվավոր գործը:

Սովետահայ գրականությունը հանդես գալով խաղաղության համար մղվող պայքարում, Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ մի ձևատուով, իր լուծման է մտցնում համաշխարհային պատմության այդ ամենամասսայական շարժման մեջ:

Սովետահայ գրողները, արտացոլելով Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան խաղաղ շինարարության հերոսական դրվագները, մերկացնելով ամերիկա-անգլիական իմպերիալիստների ստոր մեքենայությունները գաղութային և կախյալ երկրներում, բոլոր այդ դեպքերում պայքար են մղում հանուն խաղաղության, անմիջական կերպով արձագանքում խաղաղության ժամանակակից շարժմանը: Ինչպես ողջ սովետական գրականության, նույնպես և սովետահայ գրականության լավագույն երկերը, արտացոլելով սո-

վետական ժողովրդի հերոսամարտը Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում, ցույց են տալիս, թե ինչպես սովետական մարդիկ այդ պատերազմում հանդես են եկել հանուն խաղաղության նվաճման։ Արտացոլելով հետպատերազմյան խաղաղ շինարարությունը, սովետական գրականությունը, այդ թվում նաև սովետահայ գրականությունը, ցույց են տվել, որ Սովետական Միության ժողովուրդներն իրենց հերոսական աշխատանքով ապահովել են անցումը սոցիալիզմից կոմունիզմ, հզորացրել են խաղաղության անառիկ ամրոց Սովետական Միությունը։

Եվ վերջապես, մերկացնելով ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից համաշխարհային պատերազմի նախապատրաստման փորձերը, սովետական գրականությունը մերկացնում է իմպերիալիզմի ռազմամոլ էությունը և հաստատում խաղաղության պահպանման և ամրապնդման համար ելած հարյուր-միլիոնավոր մարդկանց պայքարն ամբողջ աշխարհում։

I

Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, ուստի ժողովրդի գլխավորությամբ, հանուն Սովետական Հայրենիքի կռվում էին նաև հայ ժողովրդի զավակները, կռվում էին Սովետական Հայրենիքի վրա ուխտադրուժ կերպով հարձակված ֆաշիստական Գերմանիայի դեմ: Պատերազմ հանուն Սովետական Հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն ընդհատված սոցիալիստական շինարարության վերականգնման — ահա այդ վեհ զաղափարով են տոգորված ինչպես ողջ սովետական գրականության, նույնպես և սովետահայ գրականության Հայրենական պատերազմն արտացոլող լավագույն երկերը, սկսած բանաստեղծություններից ու ակնարկներից, վերջացրած մեծածավալ վեպերով:

Հայրենական պատերազմում սովետական ժողովուրդների տարած հաղթանակի օրը՝ Մայիսի 9-ը, դառնում է ազատասեր և խաղաղասեր ժողովուրդների տարեգրության ամենապայծառ օրերից մեկը: Մայիսի 9-ը, սովետական ժողովուրդների հաղթանակի շնորհիվ նվաճված խաղաղության այդ առաջին օրը, նոր ժամանակաշրջան է բացում պատմության մեջ՝ խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար մղվող պայքարի նոր ժամանակաշրջան:

ջան: Այդ նոր ժամանակաշրջանի շեմքին ոսկյա տա-
ռերով գրված են Ի. Վ. Ստալինի խոսքերը, ուղղված
ժողովուրդներին պատերազմի ավարտի առթիվ. «Այժմ-
վանից Եվրոպայի վրա կծածանվի ժողովուրդների ազա-
տության և ժողովուրդների միջև խաղաղության մեծ
դրոշը»:

Սովետահայ գրողները, արտահայտելով սովետական
ժողովրդի ցնծությունը գերմանական Ֆաշիզմի վերջնա-
կան պարտության առթիվ, իրենց ակնարկներում, հրա-
պարակախոսական հոգվածներում, պատմվածքներում և
բանաստեղծություններում նվաճված խաղաղությունը
գովերգում են՝ որպես սովետական ժողովրդի հերոսա-
կան պայքարի հետևանք: Հաղթանակի առաջին օրերին
գրած «Ներբող հաղթության» բանաստեղծության մեջ
Նաիրի Զարյանը միանգամայն արդարացի կերպով Սո-
վետական Հայրենիքի մղած հերոսական պատերազմով
էր բացատրում այն հանգամանքը, որ հաղթանակից
հետո իր Հայրենիքը դարձավ խաղաղության աներեր
ամրոց: Սովետահայ գրողները Հայրենական Մեծ պա-
տերազմում Սովետական Բանակի կողմից ձեռք բերված
հաղթանակը գովերգում են՝ որպես այդ պատմական մեծ
իրադարձությանն ակտիվորեն մասնակցած հայ ժողո-
վրդի ներկայացուցիչներ: Հայրենական Մեծ պատե-
րազմի ճակատներում անձնվիրաբար կռվող որպես հայ
ժողովրդի զավակների խոսք՝ հեռավոր Լատվիայի Կուր-
լանդական անտառներից հնչեց Հայրենական Մեծ պա-
տերազմի մասնակից, սովետահայ գրող Հ. Քոչարի ակ-
նարկ-նամակը «Պատմության մեծ օրը» վերնագրով:

Այդ ակնարկում հեղինակը պատմում է, թե ինչպես
Կուրլանդական անտառներում կռվող զորքերն առաջին
սնգամ լսում են հաղթանակի և խաղաղության մասին:

Ակնարկ-նամակն արտահայտում է սովետական զորքերի հերոսական հաղթանակի շնորհիվ ձեռք բերված խաղաղության ցնծությունը, խաղաղությունը, որը նվաճվել է պատմության մեջ շտեմնված հերոսությամբ, և որը պետք է պահպանվի ամեն դնով:

Քոչարը միևնույն ժամանակ հպարտությամբ է նշում այն փաստը, որ հայ ժողովուրդը, որպես Սովետական Միության ժողովուրդների հերոսական և անպարտելի ընտանիքի իրավահավասար անդամ, եղբայրական ժողովուրդների հետ հերոսաբար և անձնվիրաբար պայքարեց հանուն խաղաղության հաղթանակի:

Հաղթանակի օրվա, Մայիսի 9-ի համաժողովրդական ցնծությունն է արտահայտում հայ պոեզիայի ավագագույն ներկայացուցիչ Ա. Իսահակյանը «Մեծ հաղթանակի օրը» բանաստեղծության մեջ:

Հաղթանակի օրը Սովետական Միության յուրաքանչյուր քաղաք և գյուղ, յուրաքանչյուր բնակավայր յուրովի էր արտահայտում իր անսահման երջանկությունն ու խնդությունը պատերազմի հաղթական ավարտի առթիվ: Երևանում, հաղթանակի օրը շատ տների առջև, հենց փողոցում բնակիչները սեղան էին բացել: Երգով, պարով ու ծիծաղով արտահայտելով իրենց ուրախությունը՝ նրանք սրտաբուխ խոսքերով փառաբանում ու հավերժացնում էին Հայրենիքի հաղթանակը ձեռք բերած իրենց որդիներին, եղբայրներին, ամուսիններին: Համաժողովրդական ցնծությունը դուրս էր հորդել սենյակի շորս պատերից ու լցվել քաղաքի փողոցները, հրապարակները, այգիները: Այդ համատարած խնդության հետ ձուլվելով թեթևանում էր Հայրենիքի այս երջանիկ օրվա համար ընկած հերոս մարտիկների հարազատների վիշտը, հաստատվում հերոսաբար զոհ-

վածների անմահութիւնը: Այդ գաղափարն է արտահայտված Իսահակյանի «Մեծ հաղթանակի օրը» բանաստեղծութիւն մեջ.

Մեր սուրը փառքով զրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտիկն մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,
Լցրել թասերը ոսկեփայլ գինով:

Եվ անցորդներին կանչում է, խնդրում,—
Նղբայրեն՛ք, որդուս կենացը խմենք.
Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ զարկում նորից գավաթներ իրար,
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ.—
Էս էլ իմ որդուս հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լուծւմ են մի պահ.
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա:

Իսահակյանն այս բանաստեղծութիւն մեջ ոչ մի տեղ չի դործածում խաղաղութիւն բառը, սակայն խաղաղութիւն գաղափարը մարմնավորված է յուրաքանչյուր բառում հենց առաջին տողից «Մեր սուրը փառքով զրեցինք պատյան», որի մեջ արտահայտված խաղաղութիւն նվաճման միտքը զարդանում է հետեւյալ քա-

ռատողերում — համաժողովրդական ցնծության պատկերով և երկու հայրերի կերպարների բացահայտումով:

«Եվ հեղում գինին սուրբ հացի վրա»՝ հայ ժողովրդի դարավոր սովորույթն արտահայտող այս պատկերով ավարտելով բանաստեղծությունը, Իսահակյանը Պուշկինի «Մարգարեի» բառերով ասած, կարծես հրեղեն լեզու է տվել Հաղթանակի օրը միլիոնավոր սրտեր փոթորկող ամենամիլրական ապրումներին և խոհերին: Այդ է պատճառը, որ Իսահակյանի այդ բանաստեղծությունն ընդունակ է արձագանք գտնել միլիոնավոր սրտերում և հնչել որպես հերոսական ժողովրդի հանդիսավոր և սրբազան երգում՝ կյանքի գնով պաշտպանել խաղաղությունը:

Սովետական ժողովրդի պողպատածույլ հոգևոր միասնության, նրա հաղթանակի ցնծության հետ ի մի է ձուլվում վիշտը ընկածների համար, այդ վիշտը չի ընկճում սովետական մարդկանց:

Իսահակյանը խաղաղության ցնծությունն արտահայտել է դիպուկ բառերով, ինքնատիպ բանաստեղծական պատկերներով: Նա խորապես, իր ողջ էությանմբ ապրել է խաղաղության համաժողովրդական ցնծությամբ և որպես խոսքի վարպետ, ստեղծել խաղաղության ցնծության բանաստեղծական պատկերը, ռեալ և շոշափելի, հուզիչ և ցնցող:

Մայիսի 9-ի հաղթանակի և խաղաղության համաժողովրդական ցնծության այդ բաղձալի օրվա համար զոհված որդու կերպարն է ստեղծել Հր. Հովհաննիսյանը «Վարդավաճառը» բանաստեղծության մեջ:

Բանաստեղծության հերոսը, կորցնելով պատերազմում իր զավակին, Հաղթանակի օրը, երբ քաղաքի պողոտաները լի էին ցնծացող ժողովրդով, երբ ամեն տեղ

ողջագութիւնում էին և համբուրւում, և ամենուրեք խընդովթուն էր տիրում, ծաղիկներ էին և երջանկութիւն, վարդի զամբշուղը ձեռքին վարդեր էր նվիրում անցորդներին:

Նա խորապես ցնցված է իր անձնական վշտով, սակայն այդ վիշտը նրան ոչ թե մեկուսացնում և առանձնացնում է ցնծութիւն ապրող ժողովրդից, այլ ձուլում է նրա հետ, քանի որ այդ խաղաղության տոնը նա գիտակցում է, որպէս նաև իր որդու հաղթանակը: Բանաստեղծության վերջին տողերում, դիմելով իր հերոսին, հեղինակը ասում է.

Կանգ առ, վարդավաճառ, և թող նայեմ անթարթ
Դեմքիդ՝ այնքան պայծառ, ասպետորեն բացած,
Քեզ, որ վարդ չես դրել որդուդ շիրմին անհայտ,
Բայց տալիս ես այսօր նրանք ուրիշ մարդկանց:

Մի այլ բանաստեղծության մեջ՝ «Բալլադ մոր մասին» Հր. Հովհաննիսյանը գծում է մոր կերպարը: Նրա երեք զավակներն իրենց կյանքի գնով պաշտպանում են Հայրենիքը և հերոսաբար զոհւում, իսկ ինքը, առանց վհատվելու և ընկճվելու, մեծացնում է և ոտքի կանգնեցնում իր երեք թոռնիկներին:

Մայրը անմար է պահում ընտանեկան օջախի հուրը, պատերազմից հետո նա դառնում է խաղաղության ակտիվ մարտիկ, որովհետև.

Մայրը մարգին տունկ է շարում,
Մայրն օջախի հուրն է վառում,
Որ շղառնա ավեր,
Մայրը մահվան դեմ է ելնում,
Մայրը կյանքի սերն է ծնում,
Մայրն ապրում է հավերժ:

Մոր կերպարը այս բանաստեղծության մեջ խաղաղության գաղափարի կենդանի մարմնավորումն է հանդիսանում ոչ թե միայն նրա համար, որ նա ընդհանրապես կյանք ստեղծելով հանդես է գալիս պատերազմի և մահվան դեմ, այլ իր ակտիվ գործունեությամբ, հերոսական աշխատանքով և խաղաղության համաշխարհային շարժման մեջ իր անմիջական մասնակցությամբ: Խաղաղության պաշտպանության գործը՝ դա նրա, որպես ջերմ հայրենասերի, որպես կյանքը հաստատող մոր գործն է և նա իրավամբ վայելում է ժողովրդի սերը և հարգանքը:

Մոր ընդհանրացրած կերպարը Հր. Հովհաննիսյանի մոտ հանդես է գալիս օրգանական միասնության մեջ զավակների հավաքական կերպարի հետ միասին, այն զավակների, որոնք նրա «Մեր սերնդի դիմանկարը» և մի շարք այլ բանաստեղծությունների մեջ ելնում են անարգ թշնամու դեմ, որը ձեռք է բարձրացրել նրանց «արտերի ոսկի հացի» վրա, նրանց երջանիկ սիրո և խաղաղ կյանքի վրա, այն ամենի վրա, ինչ կոչվում է սովետական:

Դեպի հաղթանակը և աշխարհի բոլոր ժողովուրդների խաղաղությունը տանող ճանապարհը նվաճվել է Հայրենիքի պաշտպանության համար ընկած սովետական ժողովուրդների լավագույն զավակների կյանքի գնով, զավակներ, որոնք սիրում էին իրենց Հայրենիքը, ինչպես իրենց կյանքը, և անջատման եզր չէին տեսնում իրենց անհատական կյանքի և Հայրենիքի միջև: Այդ ճանապարհը պատմության հաղթական առաջընթացի ուղին է: Դեպի աշխարհի բոլոր աշխատավոր ժողովուրդների համընդհանուր երջանկության և խաղաղության նվաճումը, և պատերազմի հրձիգներն անկա-

բող են աշխարհի ժողովուրդներին շեղել պատմության
այդ մեծ ճանապարհից:

Սովետական Հայրենիքի պաշտպանության համար
հերոսական մահով ընկած՝ հայ ժողովրդի պայ-
ծառ զավակներից մեկի՝ Սովետական Միության
Հերոս, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի սխրա-
գործությանն է նվիրված Վ. Դավթյանի «Ճանապարհ
սրտի միջով» լիրիկական պոեմը: Վ. Դավթյանն այդ
պոեմում թե՛ հերոսների և թե՛ ողջ Սովետական Բանա-
կի ուղին դիտում է որպես ճանապարհ դեպի խա-
ղաղության նվաճումը: Այդ գաղափարին Վ. Դավ-
թյանը գեղարվեստական մարմնավորում է տվել թե՛
պոեմի կոմպոզիցիայի հղացման մեջ, թե՛ ֆաբուլան
կառուցելիս: Պոեմի լիրիկական հերոսն իր զա-
վակին տանում է Նրեանի մանկական երկաթուղին,
Հայրենական պատերազմում հերոսական մահով ընկած
երիտասարդ գվարդիականների՝ Գաստելլոյի, Մատրո-
սովի, ինչպես նաև Հունան Ավետիսյանին նվիրած աղ-
բյուր-հուշարձանների մոտ և պատմում նրան Հունանի
հերոսական մահվան մասին: Ողջ պոեմի ընթացքում
հեղինակը մշտապես ուղեկցում է իր հերոսին, անմի-
ջական կապ պահպանելով իր հերոսի և ընթերցողի մի-
ջև, կառուցելով իր պոեմը լիրիկական պոեմի ժանրային
առանձնահատկությունների սկզբունքներով: Դավթյանը
իր հերոսի սխրագործությունն ընտրելով որպես ֆաբու-
լային հիմք, գլխավորապես ծանրանում է իր հերոսի
ներքնաշխարհի բացահայտման վրա, այդ բոլորը հա-
գեցնելով ջերմ լիրիզմով: Պայքար հանուն խաղաղու-
թյան, պատերազմ պատերազմի դեմ — ահա Վ. Դավ-
թյանի պոեմի գաղափարական առանցքը:

Պոեմի նախերգը ավարտվում է լիրիկական հերոսի կողմից իր զավակին ուղղված այն խոսքերով, որ ճանապարհը դեպի հետպատերազմյան խաղաղությունն անցել է Հունանի և նրա նման հերոսների սրտերի միջով: Պոեմի վերջերգում բանաստեղծը Հունան Ավետիսյանի որդու դասագրքի էջերում, դարձյալ շեշտում է պոեմի գլխավոր գաղափարը. «Գնդացիք լռեց... Խաղաղություն իջավ...»:

Այդ միտքը բանաստեղծը խտացնում և զարգացնում է հետևյալ կերպ: Հունանն ամառային մի օր, պոկելով ցորենի հասկը և հաշվելով հատիկները, ասում է, որ բերքը առատ է և ժամանակն է հունձը սկսելու: Հանկարծ լսում է պատերազմի մուսին.

... Եվ ամեն ինչ կյանքում փոխվեց հենց մի օրում,
Երբ առաջին ուժը Բրեստի վրա ընկած՝
Արձադանրեց ահեղ Ծավի կապույտ ձորում:
Եվ լեռնաշխարհը բո, տունը հայրենական,
Երջանկությունը բո ու ամուսն օրը շոգ
Երեքացին հանկարծ ու հանկարծ շուտ եկան
Քո մոր հրաժեշտի արցունքի մեջ խոշոր...
Երջանկությունը բո... Հեշտ չի տրվել նա բեզ,
Որ դու հեշտ ու խաղաղ՝ ոսոխին ղիջես:

Հունանի ապրումների լիրիկական այս վերարտադրության մեջ, Վ. Դավթյանը բացահայտել է ամենակարևորը — նրա սերը դեպի Հայրենիքը, ատելությունը ու զայրույթը դեպի թշնամին: Նկարագրելով այն ճակատամարտը, որի ժամանակ Հ. Ավետիսյանն ընկնում է հերոսի մահով, հեղինակն այն միտքն է հայտնում, որ ճանապարհը դեպի հաղթանակ և խաղաղություն, դեպի հայրենի տուն և երջանկություն անցնում է թշնամու գրաված Դուդայա լեռան վրայով, և այդ ճանապարհը

թամանցիները պետք է անցնեին ամեն գնով, քանի որ միայն այդ լեռան առումով է, որ, ինչպես բանաստեղծն է դիմում իր հերոսներին.

Ավելի եր մոտիկ խաղաղության դուր,
Ձեր օջախին, տանը, ձեր հարազատ գյուղին,
Տառապանքի միջով դեպի երջանկություն,
Դեպի բախտ է գնում ձեր այս դժվար ուղին:

Այն բանից հետո, երբ Հունան Ավետիսյանը, կուրծքը սեղմելով թշնամու ԴՕՏ-ի հրակնատին, ապահովում է իր ընկերների հաղթանակը, Դուգայա լեռան վրա բարձրացվում է արյունաներկ դրոշը.

Նրա սրտի միջով բացված ճամփով այդ մեծ
Մեր զորությունն անհաս ու գնդերը արդար
Դնում էին հոգնած, փոշոտ ու հողմածեծ
Դեպի խաղաղություն ու հաղթանակ...

Այսօր էլ խաղաղության թշնամիների յուրաքանչյուր դավադրությունը հզոր ցասում է առաջացնում Հունանի հայրենի Ծավի ձորում — ահա այս միտքն է հայտնում Դավթյանը պոեմի վերջերգում: Եվ այսօր խաղաղության բազմամիլիոն բանակը շարունակում է պայքարը հանուն խաղաղության, օրեցօր դառնալով ավելի հզոր և ավելի անպարտելի:

Խաղաղության ժամանակակից շարժման մեջ կարևոր ներդրում են հանդիսանում Հայրենական Մեծ պատերազմն արտացոլող սովետական լավագույն վեպերը, որոնց մեջ էպիկական լայն կտավի վրա գեղարվեստորեն բացահայտվում է սովետական ժողովրդի հերոսական պայքարը հանուն Հայրենիքի:

Այդ վեպերի գլխավոր հերոսը խաղաղ պայմաններում ստեղծարար աշխատանքով տարված սովետա-

կան քաղաքացիներ է: Այդպիսիք են ուս գրականության մեջ Ա. Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա» վեպի հերոս կրասնոդոնցիները, Ա. Բուբեննովի «Սպիտակ կեչու», է. Կազակևիչի «Գարունը Օդեսի վրա», Ֆ. Պանֆերովի «Պայքար խաղաղության համար» վեպերի հերոսները: Այդպիսիք են նաև սովետահայ գրողներ Հր. Քոչարի «Մեծ տան զավակները», Ս. Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ»՝ Հայրենական Մեծ պատերազմն արտացոլող սովետահայ գրականության այդ առավել հաջողված վեպերի հերոսները:

Ս. Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ» վեպի հերոսներն են, գնդի հրամանատար Սաֆոնովը, դասակի պետ Դուդկոն, դասակի շարքային զինվորներ, Սովետական Միության տարբեր ժողովուրդների զավակներ՝ Կոլյա Մաքսիմովը, Աշոտ Սյունեցյանը, Յուխարևը, Շալիկոն, Բելին, Մամեդ Յակուբովը, որոնք խորապես գիտակցում են, որ այստեղ, Լենինգրադի մատույցներում նրանք պաշտպանում են հզոր և անպարտելի միասնություն կազմող Բելոռուսիան, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը և մեծ Սովետական Միությունը:

Այն հողը, որի վրա նրանց վիճակվել է կռվել, նրանց համար սրբազան է: Հանուն այդ հողի պաշտպանության իրենց արյան վերջին կաթիլը տալու պատրաստ Խանզադյանի հերոսները, առաջին մարտերից, երբ նրանք ժամանակավոր նահանջի ժամանակ ջլատում էին թշնամու ուժերը, մինչև վերջին մարտերը, երբ նրանք հերոսական հաղթանակներից հետո հասնում են Հայրենիքի սահմանին, աչքի են ընկնում թշնամու հանդեպ հերոսական պայքար մղելու աներեր կամքով: Նրանք պաշտպանվում են, որպեսզի հարձակվեն, և հարձակվում են հա-

նուն պաշտպանության: Եւ այդ սրբազան պաշքարը սովեւտական ժողովուրդը մղում է հանուն աշխատավոր մարդու խաղաղ աշխատանքի և նրա «վաստակած անդորրի», ինչպէս ասում է Խանդադյանի հերոսներից մեկը, մասնագիտությամբ բժիշկ, իսկ պատերազմի ժամանակ պարտիզան՝ Իգնատի Պետրովիչը, այդ բառերի տակ հասկանալով ողջ սովետական ժողովրդի նախապատերազմյան խաղաղությունը: Երբ Սաֆոնովը մխիթարում է նրան, ասելով, որ այդ անդորրը իրենք ետ կնվաճեն, Իգնատի Պետրովիչը բացահայտում է սովետական առաջավոր քաղաքացուն հատուկ խաղաղասիրության խորը իմաստը, որն անքակտելիորեն շաղկապված է նրա հայրենասիրության ու հումանիզմի հետ. «Մենակ իմ անդորրը, — ասում է Իգնատի Պետրովիչը, — հերիք չէ ինձ: Դրա համար ես կարող էի հենց առաջուց հեռանալ գյուղից ու գնալ մի հեռավոր անկյուն, ուր ո՛չ հրդեհ ես տեսնում, ո՛չ գերմանացի, ո՛չ էլ սպանված հարազատների... Ի՞նչ գին ունի իմ տունը, երբ ողջ գյուղը հրդեհի ճարակ է դարձել...»:

Հայրենիքի պաշտպանության և խախտված խաղաղության նվաճման ամենաակտիվ ձգտումն է, որ զենքի է կոչել Իգնատի Պետրովիչին և նրա նման շատերին՝ ֆաշիստների կողմից հրկիզված իրենց Օրեխինո գյուղի վրեժը լուծելու: Այդ նույն սրբազան նվիրվածությամբ սովետական աշխատանքային խաղաղ կյանքի հանդեպ և անհաշտ ատելությամբ դեպի թշնամին պայքարում են եղբայրական դասակի զինվորները: Նրանք այդ խաղաղությունը նվաճելու հաստատ համոզմունքով են պատերազմում և վստահ են, որ հաղթանակը հանուն այդ խաղաղության նվաճման՝ կգա:

Եվ երբ Լենինգրադը հերոսաբար պաշտպանելուց հետո սովետական զորաբանականների հետ մեկտեղ նաև սաֆոնովյանները, պարտութուն կրող և արագ կերպով նահանջող գերմանական զորքերին Հայրենիքից քշելով, հասնում են պետական սահմանին, զինվոր Պետրովը մի բուռ հող է վերցնում և ասում. «Դու մեզ ուժ ես տվել, սուրբ հող: Մեզ ոգևորել ես՝ թշնամուն մեր տնից քշելիս... Քո զորությամբ մենք նրան ջախջախեցինք ու դուրս մղեցինք մեր օջախից: Այժմ էլ ուժ տուր, որ նրան ջարդենք իր որջի մեջ...»:

Գերմանական ֆաշիստների կողմից օկուպացված և սովետական մարդկանց արյամբ ու արցունքներով շաղախված հողը սրբելով դարձնագույն աղտեղութունից, Սովետական Բանակը ֆաշիզմի վտանգից փրկում է ողջ աշխարհը:

Այն ժամանակ, երբ շարքային Պետրովը վերոհիշյալ խոսքերով դիմում էր հայրենի հողին, այդ նույն ժամանակ ամբողջ սահմանագծի երկարությամբ հազարավոր մարտիկներ սկսում են սալյուտ տալ, հրթիռներ արձակել, կրակե ժապավեն ստեղծելով սահմանի երկարությամբ:

Նայելով այդ կրակե ժապավեններին՝ բոլոր սաֆոնովյանների հետ մեծ խանդավառութուն էր ապրում նաև շարքային զինվորից կապիտանի աստիճանի հասած Աշոտ Սյունեցյանը: Նա համոզված է, որ այդ հրեղեն վարագույրի միջով, հայրենի հողն այլևս չի անցնի ոչ մի թշնամի, որ արյամբ ձեռք բերված հաղթանակը հաստատուն է: Այդ նույն ժամանակ Աշոտը նկատում է, թե ինչպես իր մարտական ընկերներից մեկը՝ Կարոն բահով մաքրում էր ձյունը և հողը լցնում տոպրակի մեջ: Այնուհետև նրանց միջև տեղի է ունե-

նում հետեւյալ խոսակցութիւնը, որը բացահայտում է Հոկտեմբերեայն Մեծ ռեուլյուցիայի շնորհիւ փրկված ո՛չ միայն հայ, ա՛յլև Սովետական Միութեան մյուս բոլոր աշխատավոր ժողովուրդների կողմից ռուս մեծ ժողովրդի հետ կնքած եղբայրական միութեան գաղտնիքը:

«—Քեզ եմ հարցնում, ի՞նչ բանի ես,—ցնցելով Կարոյի ուար, նորից հարցրեց Աշոտը:

Կարոն քրտնած գլուխը բարձրացրեց, ժպտաց մի երջանիկ ժպիտով, սրբեց ճակատն ու ոտքի կանգնեց.

—Թող ամենից առաջ այս հողը ինձ վրա թափեն, ընկեր կապիտան, եթե ես գերեզման մտնեմ օտար աշխարհում: Մեր պապերից մնացած սովորութիւն է: Հնումը, երբ հայերը գնացել են օտարութիւն, կռիւ կամ մի կտոր հաց աշխատելու, իրենց հետ տարել են հայրենի հողից, որ օտար աշխարհում գերեզման գտնելու գեպքում՝ իրենց վրա ունենան հայրենի հողը:

Աշոտն առաջին անգամ էր լսում այդ ավանդութիւնը: Դա հիացրեց նրան:

—Ավանդապահ ես, Կարո, քո բերանով խոսում է մեր բազմադարեան ժողովուրդը՝ արյան ծովերն անցած ու հազիւ կործանումից փրկված հայ ժողովուրդը: Աշոտը խանդաղատանքով նայեց խանդավառութիւնից շիկնած Կարոյի աչքերին և զրկեց նրան:

—Փա՛նք սովետական իշխանութեանը: Ասես դա հենց հայի համար ստեղծվեց, թե չէ մենք էլ բունը քանդած ծախի նման, տեսնես հիմա ո՞ր քարի, ո՞ր քուլի տակ էինք,—պատասխանեց Կարոն:

—Այո. «Միայն սովետական իշխանութեան դադափարը Հայաստանին բերեց խաղաղութեան և ազգային վերածնութեան հնարավորութիւն»,—ասել է ընկեր Ստալինը:

Սովետական մեծ Հայրենիքի համար հաղթական և հանդիսավոր այդ պահին ասված այս ջերմ խոսքերը քիսում են Սովետական Միության բոլոր ժողովուրդների սրտից: Ժողովուրդների բարեկամությունը, որպես Հայրենիքի պաշտպանության ելած սովետական ժողովուրդների հերոսական հաղթանակի ամենագլխավոր գրավական, ահա, թե՛ Ս. Խանդադյանի «Մեր գնդի մարդկանց» և թե՛ Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպերի հիմնական գաղափարը:

Քոչարի «Մեծ տան զավակները» վեպի հերոսները՝ Հարավ-արևմտյան ճակատում գործող դիվիզիաներից մեկի, Սովետական Միության տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներից բաղկացած գնդի մարտիկները և հրամանատարները, նախքան գերմանական ֆաշիստների ուխտադրուժ հարձակումն ապրում էին իրենց խաղաղ և ստեղծագործական կյանքով ու ծրագրեր էին կազմում կյանքը է՛լ ավելի լավ ու երջանիկ դարձնելու մասին: Նրանք բոլորն էլ թե՛ գեներալներ Մաքսիմ Լուգանսկոյը և Լև Յանոպոլյանսկին, թե՛ գնդի կոմիսար, ավագ քաղղեկ Տիգրան Արշակյանը և պարտկազմակերպիչ Շալվա Միկաբերիձեն, թե՛ շարքային զինվորներ՝ Եղոր Սլավինը, Արսեն Տոնոյանը, Նիկոլայ Իվչուկը, Միկոլա Բուրգենկոն, Էյուր Համիդովը, Կարո Խաչիկյանը, Ալդիբեկ Մուարախովը, Արգամ Վարդունին և շատ շատերը պատերազմի դաշտ են եկել աշխատանքի տարբեր բնագավառներից: Սովետական Հայրենիքը թըշնամուց մաքրելը, հաղթանակը և խաղաղությունը, որոնց նվաճման համար նրանք չեն խնայում իրենց կյանքը, նրանց բոլոր գործողությունների վերջնական նպատակն է հանդիսանում: Եվ որովհետև նրանց գործը արդար է, որովհետև նրանք կանգնած են իրենց հզոր

Հայրենիքի պաշտպանության դիրքերում, որտեղ աշխատանքը հերոսության, փառքի և պատվի գործ է, նրանք կռվում են որպես իրենց ազնիվ աշխատանքի պտուղները վայելող աշխատավորներ, որպես երկրի իսկական տերեր: Թեև հեղինակը ընտրել է չափազանց ծանր և դժվարին ժամանակահատված՝ 1941 թ. ձմեռը և 1942 թվականի սկիզբը, այսինքն՝ այն ամիսները, երբ բանակը ժամանակավորապես նահանջում էր, վեպի սկզբից մինչև վերջը զգացվում է, որ դա դալիք հարձակման և հաղթանակի նախապատրաստումն է:

Քոչարի վեպի հերոսները՝ Սովետական Բանակի մարտիկները, սովետական ժողովրդի այդ լավագույն զավակները պայքարում են երկու և կես տասնյակ տարիների ընթացքում իրենց սեփական ձեռքերով նվաճած հաղթանակների պաշտպանության համար: Քոչարի վեպում գործող բազմազգ մարտիկների հայրենասիրությունը՝ դա սովետական քաղաքացու հայրենասիրությունն է, որի մեջ ներդաշնակվում և միաձուլվում է նրանցից յուրաքանչյուրի մոտ իր ազգային ռեսպուբլիկայի և ողջ Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը և նվիրվածությունը: Սովետական ժողովուրդների եղբայրության աներեր պատվանդանի վրա բարձրացող հայրենասիրությունը և խաղաղասիրությունը Սովետական Բանակի վերջնական հաղթանակի գրավականներն են հանդիսանում — ահա այն գաղափարը, որ դրել է Քոչարը իր վեպի հիմքում:

Շարքային մարտիկ, պատերազմից առաջ կոլտրնտեսական Արսեն Տոնոյանի խոհերը պատերազմի և խաղաղության մասին տիպական են իր դասակի հերոսաբար կռվող բոլոր մարտիկների, ինչպես և ողջ Սո-

«Լեւտական Բանակի անձնվիրաբար կռւող մարտիկների համար:

Արսեն Տոնոյանի, վեպի այդ ամենակենդանի և ամենահաջողված կերպարներից մեկի, համար կար մի սրբազան նպատակ՝ դուրս քշել ոսոխին, հաղթանակով ավարտել պատերազմը և դարձյալ զբաղվել խաղողի և բամբակի մշակմամբ: Ուկրաինական Վոլչա քաղաքի համար կռվելիս «Արսեն Տոնոյանը մտածում էր, թե ինչպես պատերազմից հետո պետք է ինքն առաջարկ անի, որ իրենց շրջանի կոլխոզները սոցիալիստական մրցման պայմանագիր կնքեն Վոլչայի շրջանի կոլխոզների հետ, և ինքը բրիգադի հետ այստեղ դա, այստեղ, ուր հիմա կռվում են, տեսնի խրամատները, այցելի սպանված ընկերների գերեզմանները, ազատ ու առանց կռանալու քայլի այդ դաշտերով»:

Խաղաղության մասին են մտածում Սովետական Բանակի մարտիկները մարտի ամենավտանգավոր պահերին, խաղաղության բառի տակ հասկանալով իրենց խաղաղ, սովետական աշխարհաշինությունը:

Խաղաղությունն այդպես է ըմբռնում նաև ավագ քաղ-ղեկ, գնդի կոմիսար, մասնագիտությամբ պատմաբան Տիգրան Արշակյանը... «Նա երազում էր խաղաղությունը, որ պիտի գար հենց պատերազմի դաժան օրենքների կատարյալ իրականացումով: Պիտի գար ու իջներ աշխարհի վրա անամպ, պարզ, փիրուզյա երկնքի պես: Նվ այս դաշտերում, ուր հիմա որոտում է հրետանին, պիտի հոնդա տրակտորը, հնձի ու կալսի կոմբայնը: Այս գյուղի փլատակները, որ մի վայրկյան լուսավորվում են հրթիռներով ու կրկին թաղվում խավարի մեջ, մոխիրներից պիտի վեր հառնեն, կենդանանան ու ողողվեն էլեկտրական լույսով, իսկ Ստարիցա գյուղի կենտրո-

նում պիտի բարձրանա կապիտան Բորիս Յուրչենկոյի հուշարձանը...

Խաղաղությո՞ւն, կգաս դու, և այլևս երբեք, երբեք չենք բաժանվի մենք իրարից, և՛ կփափայենք քեզ, և՛ պաշտպանենք քեզ բոլոր արհավիրքներից...»:

Տիգրան Արշակյանի այս խոսքերը հնչում են որպես Սովետական Բանակի մարտիկի երդումը՝ պատերազմի հաղթական ավարտից հետո պաշտպանել և ամրապնդել խաղաղությունը:

Քոչարն իր վեպում էպիկական լայն կտավի վրա բացահայտում է Սովետական Բանակի շարքային մարտիկների հոգեբանությունը, նրանց խարակտերների զարգացումը, հոգևոր աճը և կամքի կոփման պրոցեսը ամենադժվարին փորձությունների բովում: Այդ շարքային մարտիկների կոլեկտիվ սխրագործության մեջ է տեսնում Քոչարը Հայրենական պատերազմում ձեռք բերված հաղթանակների գլխավոր պատճառներից մեկը և վեպում առաջին պլանի վրա կարողանում է ստեղծել հերոսական ժողովրդի կերպարը: Եվ դա Քոչարի «Մեծ տան զավակների» մեծագույն արժանիքներից է:

Խաղաղության համար արդարացի պատերազմ մղող սովետական մարտիկի և պատերազմը որպես հարստացման միջոց դիտող ամերիկյան զինվորի հակադրությունն է ստեղծել արձակագիր Աբիգ Ավադյանը «Բրիգադիր Սեթի և խաղաղության մասին» պատմվածքում: Իրանում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հեղինակը ծանոթանում է Սովետական Բանակի մարտիկ Սեթի և ամերիկյան բանակի շարքային Գրադի հետ: Սեթը միշտ խոսում էր իր Հայրենիքի մասին, կոլտնտեսական աշխատանքի մասին, շինարարության մասին, որն ընդհատել էր պատերազմը: Սեթը

ամբողջ հոգով երազում էր պատերազմի հաղթական ավարտը, որ գնար և շարունակեր խաղաղ աշխատանքը: Ի հակադրություն Սեթի, Գրադը ցանկանում էր, որ պատերազմը երկարի, որովհետև միայն պատերազմի ժամանակ կարող էր ապահովել իր գոյությունը, պարեն, ծխախոտ և հագուստ ստանալով: Թեև նա համարյա համալսարանավարտ էր, սակայն շուներ տարրական գիտելիքներ և ոչինչ չէր հասկանում իր շուրջը տեղի ունեցող իրադարձություններից:

Սեթը երազում էր խաղաղությունը և մտածում՝ «գոնե վարնանացանին հասնեի, գոնե հունձին», իսկ Գրադը, երբ եկավ հաղթանակի օրը և խաղաղություն հաստատվեց, մեծ դժգոհությամբ է ընդունում պատերազմի ավարտը. «Գրոդը տանի, նորից անորոշություն, անգործություն, տաղտուկ»:

Տարիներ հետո հեղինակը Արարատյան դաշտի կոլխոզներից մեկում հանդիպում է բրիգադիր Սեթին, որը մեծ հիացմունքով խոսում է սոցիալիստական շինարարության և խաղաղ աշխատանքի մասին, իրենց գյուղում կառուցվող դպրոցների և ակումբների մասին:

«Եվ մինչ այնտեղ, այն «դեղին սատանայի» երկրում, մի խումբ վանդալներ մարդկանց նոր պատերազմով ահաբեկելու համար նորանոր պլաններ են խծրծում, այստեղ քնել է կոլխոզը և բրիգադիր Սեթը երազում տեսնում է ծառուղին, պուրակը և հորդուն բերքը»:

Հորդուն բերք երազող և այդ բերքի համար պայքարող Սեթը, թե՛ պատերազմի դաշտում և թե՛ կոլխոզի խաղաղ դաշտերում գործում է իր Սովետական Հայրենիքի՝ ողջ աշխարհի խաղաղության անպարտելի պատվարի հետագա հզորացման համար:

Սովետական Բանակը հաղթանակ տանելով ֆաշիզմի դեմ, աշխարհի բոլոր ժողովուրդներին բերում էր խաղաղություն: Սովետական Բանակի հաղթական քայլերգը հնչում էր որպես խաղաղության քայլերգ, ինչպես այդ մասին գրում է բանաստեղծ Ս. Հարությունյանը «Մեր գումարտակը մտնում է Պորտ-Ատուր» բանաստեղծության մեջ: Պորտ-Արտուրում չինացիները և կորեացիները խնդրեցամբ են դիմաւորում ազատարար սովետական մարտիկներին.

Ու ծաղիկներ են
Ցանում ճամփին մեր
Կարմիր վարդեր են
Մեր ճամփին փռում,
Եվ վստահ են նրանք, որ մեր գումարտակը
Իր հետ արեւ է
Ու կյանք է բերում.
Գիտեն, որ ոտքով մեր գումարտակի
Ազատությունն է
Մտնում Պորտ-Արտուր,
Երջանկությունը
Ու ցնծությունը
Խաղաղությունն է
Մտնում Պորտ-Արտուր:

Այսպիսի խնդրեցամբ են դիմաւորում սովետական մարտիկների մուտքը Պորտ-Արտուր: Սովետական Բանակն իր հետ բերում էր այն, ինչի մասին երազում էին ժողովուրդները՝ ազատություն և խաղաղություն:

II

Սովետական գրողների հետ միասին սովետահայ գրողները ևս, մերկացնելով ամերիկա-անգլիական իմպերիալիզմի ագրեսիվ և ռազմամոլ էությունը, ցույց են տալիս, թե ինչպես ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից ծրագրվող նոր համաշխարհային պատերազմի դեմ կանգնած է դեմոկրատիայի և խաղաղության բանակը Սովետական Միության գլխավորությամբ:

ԱՄՆ-ը, որպես նոր պատերազմի օջախ — այս թեմային են նվիրված սովետահայ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ: Այդ ստեղծագործություններից է Ս. Վահունու «Սպիտակ տունը» բանաստեղծությունը, որտեղ քաղաքական երգիծանքի այրող լեզվով դատապարտվում է ԱՄՆ-ի կառավարող շրջանների ռազմամոլ քաղաքականությունը. բանաստեղծությունը կառուցված է ԱՄՆ-ի պրեզիդենտի ռեզիդենցիան հանդիսացող «Սպիտակ տան» անվան և բովանդակության հակադրության վրա: Բանաստեղծությունը սկսելով այս բառերով. «Շատ է հնացել այդ տան անունը» հեղինակը դիմում է Ամերիկային, որպեսզի նա նոր անուն գտնի այդ տան համար, քանի որ.

Ինչո՞ւ սպիտակ կոշիկ այն տունը,
Ուր սև են բոլոր գործերն անխտիր:

«Սպիտակ տան» հասկացողությունը, որը աշխարհի բոլոր ժողովուրդների համար դարձել է ռեակցիայի հոմանիշ, Ս. Վահանյան դիպուկ կերպով փոխում է իր հակադրության, նկատի ունենալով աշխարհի այն սե գործերը, որոնք կատարվում են «Սպիտակ տանը»: Այդ տան պատերից երբեք չի ջնջվի «խոշտանգված նեղրե-րի կարմիր արյունը», «չինացու ձեռքի հետքը արնա-ներկ», այնտեղ «սենյակ շունի խաղաղությունը» և «սան-դուղքների տակ է գիշերում», իսկ ամեն մի աղյուսը «դուլարն է կանաչ»: Այս պատկերավոր բնորոշումներով հեղինակը բացահայտում է «Սպիտակ տան» բուն էութ-յունը — ժողովուրդների արյան և քրտինքի գնով իր մի քանի տասնյակ տերերի կողմից անհաշիվ դուլար-ներ դիզելու, ինչպես նաև նոր համաշխարհային պա-տերազմ նախագծելու փաստը: Բանաստեղծության յուրաքանչյուր քառատողը սկսելով «Ինչո՞ւ սպիտակ կոշիկի այն տունը» բառերով և այնուհետև հակադրելով այդ անվանը այդ տան մեջ կատարվող սե գործերը, բանաստեղծը վերջին քառատողում ամերիկյան ժողո-վրդին է դիմում հետևյալ բառերով.

Բավ է... Փոխեցեք Սպիտակ անունը
Եվ կամ վարձեցեք այլ գույնի շներ,
Որ չատենք նաև այդ անբիծ գույնը,
Չասենք սպիտակ և սևը հիշներ:

Այս տողերում սպիտակ տան և սե գործերի հա-կադրությունը վերածվում է ամերիկյան ժողովրդին ուղ-ղված կոչի՝ տնօրինել իր բախտը իր սեփական ձեռքե-րով: Միայն այդ ձևով «Սպիտակ տան» անունը կհա-մապատասխանի իր բովանդակությանը:

թվում նաև Հայրենիք գտած հայերին՝ «Նախկին ան-
տունին».

Եվ ինչու միայն նախկին անտունը,—
Անկարան էլ, որ ունի ականջ,
Երգն այս լսում է, բռնում դաշույնը...
Բայց ձեռքն անզոր է և արդեն կարճ:
Իսկ երբ լսում է այն վաշինգտոնը,
Ասես մըսում է հոգին իր մերկ,
Որ մեր պարզեամբ ազատությունը
Ոչ թե արձան է, այլ կյանք է ու երգ:
Կյանք, որ ստացավ այս երգի տերը
Շուայլ ձեռքով մեր Հայրենիքի
Բաց արեք բոլոր բարձրախոսները,—
Ազատությունն է փոխվել երգի:

Սովետական Միության Ժողովուրդների հայրենա-
սիրությունը և խաղաղասիրությունը խարսխված են
նրանց անպարտ եղբայրության հիմքի վրա և այդ եղ-
բայրության դեմ անզոր են ամերիկա-անգլիական իմ-
պերիալիստները և նրանց վարձկանները: «Գարունը
Արարատյան դաշտում» բանաստեղծության մեջ, Արաք-
սի երկու ափերի հակադրությամբ ստեղծելով երկու
աշխարհների պատկերը, Վ. Դավթյանը գրում է.

Ծաղկել են դեղձի ծառերը փարթամ
Եվ օրորվում են քամու սոսափից,
Դարունը զուգել դաշտն Արարատյան
Ու կանգ է առել Արաքսի ափին:

Արաքսի այս ափին բարդու տակ մի զույգ է կանգնել
«գարնան պես թովիչ», իսկ այն ափում նյու-Յորքից
բերված թնդանոթի մոտ կանգնել է թյուրքական սպան,
որը կուզեր կրակ բանալ այդ զույգի վրա.

Համաշխարհային պատերազմի ամերիկա-անգլիական հրձիգներին, գրում է.

Վաստակի մարդկանց ղայրույթը հիշեք
Եվ շնորհանար, ինչ էլ որ լինի,
Ստալինգրադյան խարույկները շեկ
Եվ դորշ մոխիրը պարտված Բեռլինի:
Աշխարհ տիրելու ցնորքը տանջող
Եվ ոսկու տենդը ձեզ ուր էլ տանի,
Հաղթական կռվի ավարտն ավետող
Ձայնը հիշեցեք հզոր Մոսկվայի:

«Վաստակի մարդկանց ղայրույթը», «պարտված Բեռլինի դորշ մոխիրը» և «Հաղթական կռվի ավարտը»՝ այդ ամենն օրդանապես կասված են սովետական ժողովրդի Հայրենական պատերազմի ճակատներում ձեռք բերած մեծ նվաճումների հետ: Այսօր էլ նոր պատերազմ ծրագրող թշնամին կստանա իր արժանի հակահարվածը, եթե ձեռք բարձրացնի սովետական ժողովրդի երջանկության և ազատության վրա:

Սովետական ժողովուրդն իր երջանկությունն ու ազատությունը նվաճում է իր հերոսական աշխատանքային էներգիայի և ամեն տեսակ թշնամիների դեմ ամենօրյա պայքարի շնորհիվ: Այդ անսասան պատվանդանի վրա է բարձրանում նրա երջանկությունը և ազատությունը:

Բանաստեղծուհի Աղավնին, անվանի երգչուհի, Ստալինյան մրցանակի լաուրեատ, Գոհար Գասպարյանին նվիրված «Երկու երգ» բանաստեղծության մեջ, մարմնավորել է այն դադափարը, որ Գոհարի մոտ երգի է փոխվել Սովետական Հայաստանի երջանիկ, խաղաղ և ազատ ժողովրդի կյանքը: Այդ երգը հնչում է Միության բոլոր բարձրախոսներով և հմայում բոլորին, նրանց

թվում նաև Հայրենիք գտած հայերին՝ «Նախկին ան-
տունին».

Եվ ինչու միայն նախկին անտունը,—
Անկարան էլ, որ ունի ականջ,
Երգն այս լսում է, բռնում դաշույնը...
Բայց ձեռքն անզոր է և արդեն կարճ:
Իսկ երբ լսում է այն վաշինգտոնը,
Ասես մրսում է հոգին իր մերկ,
Որ մեր պարզեամբ աղատությունը
Ոչ թե արձան է, այլ կյանք է ու երգ:
Կյանք, որ ստացավ այս երգի տերը
Շուայլ ձեռքով մեր Հայրենիքի
Բաց արեք բոլոր բարձրախոսները,—
Աղատությունն է փոխվել երգի:

Սովետական Միության ժողովուրդների հայրենա-
սիրությունը և խաղաղասիրությունը խառնալված են
նրանց անպարտ եղբայրության հիմքի վրա և այդ եղ-
բայրության դեմ անզոր են ամերիկա-անգլիական իմ-
պերիալիստները և նրանց վարձկանները: «Դարունը
Արարատյան դաշտում» բանաստեղծության մեջ, Արաք-
սի երկու ափերի հակադրությամբ ստեղծելով երկու
աշխարհների պատկերը, Վ. Դավթյանը գրում է.

Ծաղկել են դեղձի ծառերը փարթամ
Եվ օրորվում են քամու սոսափից,
Դարունը զուգել դաշտն Արարատյան
Ու կանգ է առել Արաքսի ափին:

Արաքսի այս ափին բարդու տակ մի զույգ է կանգնել
«գարնան պես թովիլ», իսկ այն ափում Նյու-Յորքից
բերված թնդանոթի մոտ կանգնել է թյուրքական սպան,
որը կուզեր կրակ բանալ այդ զույգի վրա.

Կուգեր նա այնպես... բայց նրա գիմաց
Սահմանի վրա իմ մեծ տերության,
Մեր սահմանապահ զինվորն է կանգնած
Թիկունքում ուժը մեր եղբայրության:

Այդ անպարտելի եղբայրության ուժի մասին է գր-
րում Վ. Դավթյանը «Եղբայրական Վրաստանում» շարքի
«Ծերունի կոլխոզնիկ Քվաչախիայի բաժակաճառը» բա-
նաստեղծության մեջ: Վ. Դավթյանը պատմում է, թե
ինչպես Վրաստանի կոլխոզներից մեկում մի կոլտնտե-
սականի մոտ Հայաստանից եկած հյուրերի ներկայու-
թյամբ խոսք է բացվում պատերազմի մասին և ծերունի
տանտերը՝ կոլխոզնիկ Քվաչախիան այսպես է խոսում.

Եղբայրությունը սուր է մեր ձեռքում,
Մենք գիտենք, այո, նրա ուժը մեծ,
Եվ հիմա ոչ թե եղբայր ենք երկու,
Այլ եղբայրներ ենք դարձել տասնվեց...
Իսկ այդ ուժի դեմ, վկա այս գինին,
Սուրբ ու անարատ այս հացը վկա,
Ամբողջ աշխարհում, ինչ էլ որ լինի
Ավելի զորեղ ոչ մի բան չկա...

Դավթյանն այստեղ ո՛չ թե ճառել է տալիս իր հերո-
սին, այլ պատկերավոր ձևով, Վրաստանի կոլտնտեսա-
կանի համար տիպական բանաստեղծական պատկեր-
ներով և համեմատություններով բացում է Քվաչախիայի
ամենանվիրական խոհերը, ոչ միայն իր հարեան հաջ
ժողովրդի և Վրաստանի եղբայրության, այլև ողջ Սո-
վետական Միության ժողովուրդների եղբայրության մա-
սին:

Ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ Սովետական
Միության ժողովուրդների այս աներեր բարեկամությունն

է, որ հանդիսանում է խաղաղության ժամանակակից շարժման ամենահուսալի պատվարը:

Պրագայի խաղաղության Համաշխարհային Կոնգրեսի դելեգատ Նաիրի Զարյանը, հայտնելով իր տպավորությունները Պրագայի կոնգրեսի մասին, «Սովետական Միությունն է խաղաղության ամրոցը» ակնարկում, գրում էր. «Պրագայում հավաքված տարբեր ազգի, գույնի ժողովուրդները հասկանում են միմյանց, որովհետև բոլորին միացնում էր մի բառ՝ խաղաղություն: Զի կարելի առանց հուզմունքի տեսնել, թե ինչպես միևնույն սեղանի շուրջ նստած՝ իրար հետ աչքերով խոսում և իրար հասկանում են Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի ժողովուրդների ներկայացուցիչները: Այդ անկեղծ պայծառ ժպիտները, սպիտակ, սև, շագանակագույն, դեղին ձեռքերի այդ փոխադարձ ու ջերմագին սեղմումները, այդ բազմաթիվ հասկանալի և անհասկանալի բացազանչությունները, այդ կայտառ խլրտումը և կենսութախ ժպիտները նշանակում են մի բառ.

Խաղաղություն:

Խաղաղությունն է այն ամենամատչելի թարգմանիչը, որի օգնությամբ իրար հասկանում են չին կոմունիստ բանաստեղծը, Ինդոնեզիայի սրճագույն ուսանողը և Լատվիայի շիկահեր արտիստուհին, Հասարակածային Աֆրիկայի պրոֆեսորն ու Ուրալից եկած ստախանովական բանվորը»:

Պրագայի խաղաղության Համաշխարհային Կոնգրեսի մասին Ն. Զարյանի հայտնած այս տպավորություններն իրենց վառ բանաստեղծական մարմնավորումը և խտացումն են ստանում «Խաղաղության աղավնին» բանաստեղծության մեջ, որը խաղաղության ժամանակա-

կից շարժմանը նվիրված լավագույն բանաստեղծութ-
յուններից մեկն է: Եթե խաղաղությանը նվիրված բազ-
մաթիվ բանաստեղծությունների մեջ հեղինակները հա-
ճախ բավարարվում են վերացական խոսքերով, ապա
Ն. Զարյանն իր բանաստեղծության գլխավոր միտքը
բացահայտել է հուզիչ և սրտառուչ բանաստեղծական
սլափերների միջոցով: Շոշափելիության շափ հստակ
կերպարներից՝ անբռնազբոսիկ կերպով բխում է գլխա-
վոր գաղափարը:

Պրագայի Կոնգրեսի նիստերից մեկի ժամանակ
ահա բեմ է ելնում տիկնիկը ձեռքին վեց տարեկան մի
աղջիկ, որը ողջունելով Կոնգրեսի մասնակիցներին,
կարծես հանդիսականների մեջ որոնում էր մեկին:

Ճերմակ, ճերմակ ու ոսկեթեփ
Մի ժապավեն կար մազին.
Կարծես թե բեմ էր բարձրացել
Խաղաղության աղավին:

Աղջիկը նկատելով, որ իրեն ծափահարողներից մե-
կի կրծքին ոսկե աստղեր են շողում, տիկնիկը ամուր
գրկելով, մանրաքայլ, բայց վճռական, մոտենում
է նրան, ամենևին չիմանալով, որ դա պարտիզանա-
կան շարժման ղեկավարներից մեկն է՝ Սովետական
Միության Կրկնակի Հերոս Ֆեոդորովը: Սակայն նրա
կրծքին շողացող աստղերից, մանուկներին հատուկ
սրաթափանցությամբ, նա զգում է, որ իր դիմաց սովե-
տական երկրի քաղաքացին է կանգնած և նրան, որպես
իր, և աշխարհի բոլոր մանուկների փրկչին:

Ասաց, քեռի, չունեմ ես հայր...
Սպանված է նա Աթենքում...
Ես Տիկնիկիս և ինձ համար
Խաղաղություն եմ ուզում:

Ն. Զարյանը կարողացել է այս շորս տողի մեջ խտացնել ողջ բանաստեղծության մեջ արտահայտված դադափարը: Այդ բառերի մեջ հնչում է և՛ երկրորդ համաշխարհային պատերազմում որբացած, և՛ բոլորովին ոչ մի կրակոց չսած բոլոր մանուկների խնդիրը՝ ուղղված խաղաղության կողմնակիցներին ու նրանց ավանգարդում կանգնած սովետական ժողովրդին՝ արգելեցե՛ք նոր համաշխարհային պատերազմը, դուք կարող եք այդ անել:

Սովետական բանաստեղծ Տիխոնովի «Ամերիկյան պատմություն, պատմված կոնգրեսում» բանաստեղծության մեջ մի փոքրիկ աղջիկ, լսելով պատերազմի և ումբակոծությունների մասին, աղաչում է մորը «գնալ այնտեղ, ուր չկա երկինք»: Տիխոնովը կարողացել է մանկական հոգեբանության անմիջականության մեջ բեկված ցույց տալ պատերազմի սարսափները: Նաիրի Զարյանի բանաստեղծության հերոսուհին արդեն տեսել է այդ սարսափները, նա կորցրել է իր հորը և այսօր, խաղաղության Կոնգրեսում տիկնիկն ամուր բռնած բեմ է ելնում և դիմում է Սովետական Բանակի հերոս զինվորին, որպեսզի նա ապահովի իր երջանիկ և խաղաղ ապագան և նա վստահ է, որ դիմում է նրան ում հարկավոր է դիմել: Երբ Ֆեոդորովը գրկում է խաղաղություն պահանջող աղջկան և երբ հնչում են «խաղաղություն մանուկներին» խոսքերը, զգում ես, որ քո առջև կանգնած է խաղաղության ողջ բանակը, և նրա ավանգարդում սովետական երկիրը, որպես խաղաղության և մարդկության գալիք երջանկության արթուն պահակ:

Ֆեդորովը գրկեց նրան,
 Սեղմեց կրծքին փառավոր:
 Ալեկոծված ոտքի ելան
 Դեկզատները բոլոր:
 Դեկզատներ կային այնտեղ՝
 Մորթերը սև ու սպիտակ,
 Մազերը՝ կոշտ, աչքերը՝ շեղ,
 Բայց հոգիները՝ շիտակ:
 Բոլորն ուրախ ժպտում էին,
 Ծափահարում և գոռում:
 — Խաղաղություն մանուկներին,
 Նրկրի բոլոր կողմերում,
 Իսկ մեր հերոսն ամուր ձեռքով
 Գրկել էր այն փոքրիկին:
 Նրա գրկում ժպտում էր գոհ
 Խաղաղության աղավնին:

Սիրասի «Նրգը» պատմվածքում մի փոքրիկ լեհ աղջըկա՝ Գերտրուդի աչքերի առջև գերմանական ֆաշիստները թունավորում և սպանում են նրանց տանը հյուրընկալած և Հիտլերի գազանություններին չհնազանդվող երկու երիտասարդ կնոջ: Գերտրուդը այդ օրվանից հենց որ զինվորականներ է տեսնում, վախից սկսում է դողալ: Եվ ահա գերմանացիները փախչում են քաղաքից, դալիս են սովետական զորքերը:

Գերտրուդը տեսնելով զինվորական հագուստով մարդկանց դարձյալ վախենում է: Նրանցից մեկը՝ մի հայ զինվոր, երգերով կարողանում է ճանապարհ բանալ դեպի երեխայի սիրտը: Այդ երգերը նրան հիշեցնում են սպանված երիտասարդ կանանց, և իր մանկական բնազդով նա զգում է, որ այս մարդիկ՝ սովետական զինվորները եկել են ոչ թե ժողովրդին թալանելու և սպանելու, այլ ֆաշիստական լծից ազատագրելու համար:

Նրկար ժամանակ չժպտացող Գերտրուդը սենյակը լցնում է զնգուն ծիծաղով:

Աշխարհի բոլոր կողմերում ապրող երեխաների ներկա և դալիք երջանկության ու խաղաղության պաշտպանության դիրքերում կազնած Սովետական Միության խաղաղասիրությունն են երգում նաև սովետահայ կին բանաստեղծները: Նրանց բանաստեղծություններում հանդես է գալիս սովետական մայրը, որը զենքը ձեռքին պատրաստ է պաշտպանել իր Հայրենիքը:

Բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, որը «Մոր ձայնը» ժողովածուի մեջ իր բանաստեղծական ձայնն է հնչեցրել ի պաշտպանություն աշխարհի մայրերի և մանկանց, «Այդ մենք ենք գալիս» բանաստեղծության մեջ գրում է.

Այդ մենք ենք գալիս հզոր ու հպարտ

Մայրերս աշխարհի.

Անմեղ ժպտացող մեր որդիներին

Ուսներիս առած...

... Ընդդեմ գազազած ձեր հրձիգների,

Մոլուցքից դեղնած ձեր ոսկիների...

... Ընդդեմ ոռնացող ձեր ոհմակների,

Այդ մենք ենք գալիս:

Մ. Մարգարյանը Շուշանիկ Կուրդինյանի հռչակալիոր «Բանվորները» բանաստեղծության «Այդ մենք ենք գալիս» թևավոր դարձած բառերն օգտագործելով այստեղ, որպես ռեֆրեն, այդ հանրահայտ բառերի մեջ կարողացել է մտցնել նոր իմաստ, հաղորդելով նրանց մայրերի զայրույթն ընդդեմ նոր համաշխարհային պատերազմ նյութող ագրեսորների: Մ. Մարգարյանի այս բանաստեղծությունը խաղաղության աղերս չէ անզոր և անօգնական մայրերի շուրթերին, այլ սովետական հզոր

և հպարտ մայրերի ցասումնալի բողոքը, որոնք թեև այսօր ելել են ուսներին առած իրենց անմեղ ժպտացող երեխաներին, սակայն հարկ եղած դեպքում կարող են ելնել ղենքը ձեռքներին: Աշխարհի մանուկների բախտը աշխարհի բոլոր ժողովուրդների ներկա և դալիք խաղաղության խորհրդանշն է հանդիսանում. այդ իմաստով սովետական գրականությունը հսկայական դեր է խաղում խաղաղության պաշտպանության գործում, արտացոլելով արտասահմանյան երկրների ժողովուրդների պայքարը ընդդեմ օտարերկրյա կապիտալի և հանուն խաղաղության:

Սովետական գրականությունը, մերկացնելով ամերիկա-անգլիական իմպերիալիստների մեքենայությունները, արտացոլում է իմպերիալիզմի գաղութային և կախյալ ժողովուրդների՝ Արևմուտքի և Արևելքի ժողովուրդների պայքարը հանուն խաղաղության, հանուն ազգային և սոցիալական ազատագրության:

1950 թվականի փետրվարի 14-ին Մոսկվայում ստորագրված Սովետական Միության և Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի միջև բարեկամության դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիրը հսկայական նշանակություն ունեցավ խաղաղության պահպանման գործում:

Սովետահայ պոեզիան, որը միշտ եղել է արևելյան ժողովուրդների ազատագրական պայքարի ջատագովը, այս անգամ, հանձին Նաիրի Զարյանի «Զրույց չինացիների հետ» բանաստեղծության, տալիս է խաղաղության պատվար հանդիսացող այդ ժողովուրդների մեծ բարեկամության բանաստեղծական արձագանքը: Բանաստեղծը կարմիր մայրաքաղաքի «Մոսկվա» հյուրանոցի լիֆտում հանդիպելով երիտասարդ չինացիների և չի-

Նուհիների հետ, որոնք եկել էին Պեկինից և գնում էին Բեռլին՝ խաղաղության երիտասարդական ֆեստիվալին մասնակցելու, ուզում է սրտաբաց խոսել նրանց հետ, կիսել նրանց հետ իր անսահման ուրախությունը և չինարեն ոչ մի բառ չիմանալով, գտնում է իրեն համակած զգացմունքները և ապրումներն արտահայտող բառը.

Եվ հարց եմ տալիս՝ «Դուք... Մաո Յզե-դուն»
Զինաստանից եր, ուզում եմ ասել:
— Օ՛, Մաո Յզե-դուն... Օ՛, Մաո Յզե-դուն...—
Շողում են նրանց դեմքերը ջահել:
Սեղմում են ձեռքս, ուրախ ծիծաղում,
Կարծես մենք իրար ծանոթ ենք վաղուց:
Նրանցից մեկը սթափվում է հանկարծ,
Նայում երեսիս ու տալիս է հարց.
— Ստալին... — Ստալին,—հաստատում եմ ես:
Եվ նրանք նորից կղբայրների պես
Ողջունում են ինձ: Աղմուկ ու հրճվանք:
Մենք արդեն իրար լրիվ հասկացանք:
Ասել՝ Ստալին և Մաո Յզե-դուն,
Նշանակում է բարեկամություն
Երկու մեծ, հզոր ժողովուրդների
Եվ խաղաղությունն ամբողջ աշխարհի:

«Մոսկվա» հյուրանոցի լիֆտում հանդիպած հայ բանաստեղծի և չին ժողովրդի պատգամավորների այդ փոխադարձ իրար լրիվ հասկանալու հանգամանքը Զարյանը բացահայտել է այնքան համոզիչ, որ թվում է, թե յուրաքանչյուր ազնիվ սովետական քաղաքացի իր չին կղբայրների հետ հաղորդակից լինելու համար նույն միջոցին կգլխի, կարտասաներ նույն Մաո Յզե-դուն բառը: Այստեղ, ինչպես և ընդհանրապես լավագույն գեղարվեստական երկերում, հեղինակի գաղափարը

մարմնավորվել է տիպական կոնկրետ պատկերներով մեջ և ջերմ հուզականությունը հազեցված այդ պատկերներն են, որ խոսում են ընթերցողի սրտի և մտքի հետ:

Կյանքի ճանաչողությունը և այդ ճանաչողությունը բանաստեղծական պատկերների միջոցով արտահայտելու կարողությունը Ն. Զարյանին հնարավորություն է տվել խաղաղությանը նվիրված իր լավագույն բանաստեղծություններով դառնալ սովետական խաղաղակոչ պոեզիայի առաջամարտիկներից:

Ն. Զարյանի «Զրույց չինացիների հետ» բանաստեղծության մեջ Սովետական Միության և Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի եղբայրությունն արտահայտում է Սովետական Միության և ընդհանրապես ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկաների միջև դոշություն ունեցող եղբայրական հարաբերությունների էությունը:

Սովետահայ պոեզիան արտացոլում է այն անհերքելի ճշմարտությունը, որ, եթե Սովետական Միության բարեկամական դաշինքը ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկաների հետ ամրապնդում է ժողովուրդների բարեկամությունը և խաղաղությունը, ապա ԱՄՆ-ի և բուրժուական այլ երկրների ռազմական դաշինքները՝ նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստում են հանդիսանում:

Երբ 1951 թվականին Օտտավայում տեղի ունեցած Ատլանտյան դաշինքի խորհրդի սեսիայում որոշում ընդունվեց Թյուրքիային Հյուսիս-Ատլանտյան բլոկի մեջ ընդունելու մասին, նույն թվականի նոյեմբերին Սովետական կառավարության նոտան հետևյալ կերպ բնորոշեց այդ որոշումը. «Թյուրքիային, որը ոչ մի կապ չու-

նի Ատլանտիայի հետ, Ատլանտյան բլուկի մեջ հրավիրելը չի կարող նշանակել ոչ այլ ինչ, եթե ոչ Սովետական Միության սահմանների մոտ ագրեսիվ նպատակներով ռազմական բազաներ ստեղծելու համար թյուրքական տերիտորիան օգտագործելու ձգտումն իմպերիալիստական պետությունների կողմից»։ Սովետական կառավարության այս դնահատականն ավելի հաստատվեց իրադարձությունների հետագա ընթացքով։

1952 թ. փետրվարի 16-ին Թյուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մակդին պաշտոնապես հրավիրեց թյուրքական կառավարությանը՝ մտնել Հյուսիս-Ատլանտյան հակասովետական և հակաժողովրդա-դեմոկրատական դաշինքի մեջ։ Հետևյալ օրն իսկ թյուրքական մեջլիսը վավերացրեց Թյուրքիայի մուտքը ռազմախտով արբած Հյուսիս-Ատլանտյան բլուկի մեջ։

Սակայն ամերիկյան իմպերիալիստների և նրանց կամակատար հանդիսացող թյուրքական կառավարության պլանների ու նրանց կենսագործման միջև կա մի անանցանելի պատենշ, դա կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդների անպարտելի ընտանիքի պողպատյա կամքն է և աշխարհի ժողովուրդների, այդ թվում նաև Թյուրքիայի լավագույն զավակների ազատասիրությունը և խաղաղասիրությունը։

Թյուրքիայի լավագույն զավակների խաղաղության համար մղվող պայքարի մասին է պատմում Միջազգային Ստալինյան մրցանակի լաուրեատ, թյուրքական ժողովրդական բանաստեղծ Նազիմ Հիքմեթն իր «Պատմըվածք Թյուրքիայի մասին» պիեսում։ Հիքմեթն իր այդ պիեսում պատկերացնում է, թե ինչպես թյուրքական ինտելիգենցիայի, բանվոր դասակարգի և գյուղացիության լավագույն ներկայացուցիչներն ի մի են համախմբվում

ամերիկյան օկուպանտների և նրանց վաճառված թյուրքական մինիստրների կամայականությունների դեմ, և ինչպես նրանց այդ ազնիվ պայքարում թևավորում է Սովետական Միությունը: Պիեսի հերոսներից մեկի՝ խաղաղության մարտիկ, կին-գիտնական Խաչեի խոսքերը խաղաղության համար մղվող պայքարի նպատակների մասին, ուղղված Ֆաթմային, որի թոռանը՝ Ալիին կառավարությունն ուզում է, որպես զինվոր ուղարկել Կորեա, բխում է թյուրքիայում խաղաղության պաշտպանության համար ելած բոլոր ազնիվ մարդկանց սըրտերից. «Ասել թյուրք ժողովրդին, որ զինվորներ ուղարկել Կորեա՝ նշանակում է դավաճանել թյուրք ժողովրդին: Մենք ամբողջ ժողովրդին պայքարի ենք կոչում խաղաղության համար...»¹:

Խաղաղության անձնվեր մարտիկներից է ինքը՝ Նազիմ Հիքմեթը, որին սովետահայ բանաստեղծներ՝ Ն. Զարյանը, Գ. էմինը, Ա. Գրաշին, Վ. Դավթյանը նվիրել են սրտահույզ և եղբայրական սիրով լի բանաստեղծություններ: Այդ բոլոր բանաստեղծությունների մեջ Նազիմ Հիքմեթը հանդես է գալիս խաղաղության մարտիկների հետ մի շարքում, իր երկրի և ժողովրդի թշնամիների դեմ:

Սովետահայ գրողները, մերկացնելով ամերիկա-անգլիական իմպերիալիստների գաղութարար քաղաքականությունը թյուրքիայում և Իրանում, ցույց են տալիս, թե ինչպես ժողովրդական մասսաների մեջ ծավալվում ու խորանում է պայքարը խաղաղության համար, ազգային և սոցիալական ազատագրության համար, և նրանց ինքնագիտակցության արթնացման գործում

¹ Назым Хикмет, „Рассказ о Турции“, Москва, ИЛ, 1952 г., стр. 33.

ինչպիսի հսկայական դեր է խաղում Սովետական Միության թյունը:

Մերկացնելով ամերիկյան կառավարության կողմից ումն Վիլյամ Սմիթի ղեկավարությանը իբր նույն տապանը փնտրելու նպատակով կազմակերպված հետախուզական արշավանքը, բանաստեղծ Գևորգ Էմինեն իր «Արարատի գագաթին» պոեմի մեջ ամերիկյան աչքակապությունների զոհ դարձած թյուրք գյուղացի Օսմանի և ամերիկյան իմպերիալիստների գործակալ Սմիթի բախման միջոցով բացահայտում է ամերիկյան իմպերիալիզմի և թյուրքական ժողովրդական մասսաների միջև հասունացող կոնֆլիկտը:

Ամերիկյան լրտեսների և հետախույզների բանդային Վիլյամ Սմիթի ղեկավարությանը դեպի Արարատի գագաթն է ուղեկցում թյուրք գեղջուկ Օսմանը: Երբ հասնում են Արարատի գագաթին և այնտեղից Սմիթը գայլի հայացքով դիտում է մեր երկիրը:

Նշելու, թե ինչ հանձնել արկերին
եվ նապալմ ցանկ ու կանաչ արտում...

Այդ նույն ժամանակ Օսմանը ևս դիտելով օբյեկտները հիանում է Հայաստանի վերածննդով.

«Օբյեկտներին» էր զարմացած նայում,
Հայոց աշխարհին, որ այգաբացին
Շողում էր հեռվում, կանչում, հմայում...
Նայում էր Օսմանն աչքերը չուած,
Տրորում աչքերն ու շէր հավատում:
Չէր տեսել երբեք նա այդպես հրաշք...

Օսմանը վերափոխված, վերածնված և ծաղկած էր տեսնում այն դաշտերը, որոնք տասնութ և քսան թվականին ավերակ և մոխիր էին դարձել.

Սարդարաբատը: «Ձէ, էն շի, վալլահ,
էնտեղ ավազ էր, մոխիր ու բամի,
էստեղ բախշա է՝ խալու պես փռած...
... էս ի՞նչ բլուշկեր են սարերի վրա,
էս ի՞նչ ջրեր են ղռերը ջրում,
Թե Արփաշայն է էս ջուրը վարար,
ի՞նչ նոր գլուղեր են նրա ամերում...
էս ի՞նչ բաղաբ է Ալեքսոյի տեղ,
Դավալուից ի՞նչ ծուկ է բարձրանում:

Եւ երբ այսպէս հիացած Օսմանը նայում էր այն
կողմ ու ժպտում, նրա այդ հիացմունքը նկատում է
Սմիթը և զայրացած ապտակում է նրան ու զրկում հա-
զար լիրա վարձից: Օսմանը ոչինչ չհասկացավ, ի՞նչ էր
արել նա, որ ամերիկացի բեյը նրան ապտակեց.

Օսմանն, ընթերցող, դեռ չհասկացավ,
Բայց կհասկանա նա վաղը անշուշտ,
Որ ճիշտ է հազար լիրա ստացավ,
էլի վիզը ծուռ մնաց այս աշուն.
Բայց տեսավ այն, ինչ աշբերից նրա
Թաքցնում էին լեռները ստի,
Այն, ինչ ողջ կյանքում երազել էր նա,
Տեսավ իր տնից երկու բայլ մոտիկ,
Եւ նոյն ստիպի անգամ աշխարհում
էլ յաթաղան շի շարժի նրա դեմ...
Ինչ անելը նա դեռ չի իմանում,
Բայց ինչ չանելը լավ գիտի արդեն:

Էմինը կարողացել է թյուրք չքավոր գլուղացի Օս-
մանի հոգեբանության մեջ կատարված բեկման միջո-
ցով ցույց տալ նրա ինքնագիտակցության զարգացման
նոր աստիճանը: Օսմանն արդեն համոզված է, որ եր-
բեք զենք չի բարձրացնի Սովետական Միության դեմ և
այդ՝ «ինչ չանելը» նրա ինքնագիտակցության այն նոր

աստիճանն է, որ նրան բերել է դեպի խաղաղության բանակը, չնայած այն բանին, որ Օսմանն այդ դեռ լիովին չի ըմբռնել, և բանաստեղծությունը չի ավարտվում Օսմանի կողմից խաղաղության ցույցում ունեցած մասնակցությամբ: Առանց այդ շաբլոն ֆինալի էլ էմինը տիպական հանդամանքների գեղարվեստական բացահայտումով համոզում է ընթերցողին, որ իր հերոսը պետք է այդ ուղղությամբ զարգանա:

Գրաշու «Խճուղու եզրին» բանաստեղծության հերոս թյուրք գեղջուկ Մուրադը ևս Օսմանի նման իր մեջքի վրա զգալով յանկինների լուծը, պայքարի է ելնում նրանց դեմ՝ մաքրելու համար իր երկիրը ամերիկյան իմպերիալիստներից, որոնք լցրել են թյուրքիայի խճուղիները ռազմամթերք տեղափոխող մեքենաներով և իր հայրենիքը վեր են ածել ռազմական պլացդարմի Սովետական Միության դեմ:

Թյուրք աշխատավոր ժողովրդի թշնամիները նույն ջարդարարներն են, որոնք առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ բնաջնջեցին հայ ժողովրդի համարյա կեսը՝ այդ ջարդարարներն են անգլո-ամերիկյան իմպերիալիստները և նրանց դարձելի կամակատարները, թյուրք ժողովրդի դավաճանները, թյուրքական ռեակցիոն կառավարական շրջանները: Այդ մասին է գրում բանաստեղծ Աշոտ Գրաշին «Լույսը սահմանի վրա» բանաստեղծություններիցիկում, որտեղ ցույց է տրված նաև, թե ինչպիսի փրկարար փարոս է հանդիսանում Սովետական Միությունը թյուրք աշխատավոր ժողովրդի համար:

Ահա երեք հովիվ խավար գիշերին մոլորվել են լեռնային կածաններում: Նրանցից մեկը՝ մի քուրդ հովիվ խորհուրդ է տալիս մշուշում բոցկտացող կենի-

նականի լույսերով առաջնորդվել: Երկրորդ հովիվը խոստովանում է, որ միշտ այդ լույսով է որոշում իր խավար ճամփան.

Երրորդ հովիվը լուռ է, որպես բար,
Ի՞նչ է խորհում նա և ինչի՞ մասին,
Ի՞նչ է մտորում երկար ու երկար՝
Իր միտքը տված գալիք երազին:

Լու՞մ ես, գիշեր, չես պատասխանում,
Չն՞ս բացում դու ինձ սիրտն այն շրջանի,
Ես խմանում եմ ինչ է միտք անում,
Ու տենչում մութ որդին Տաճկաստանի:

Նա մտածում է, թե ե՞րբ Թյուրքիայում
Պիտի շողշողա լույսը Լենինի,—
Ու բուռն տենչով նայում է, նայում
Աստղահույլերին Լենինականի:

Սովետական երկրի հրաշալի վերափոխությունը, նոր աշխարհի ստեղծագործությունը, դարձել է ողջ աշխարհի աշխատավոր մարդկանց երազած խաղաղության հուսալի և վստահելի պատվարը:

Այս երեք հովիվներն ընդհանուր դժերով բնորոշում են Թյուրքիայի այն ժողովրդական մասսաներին, որոնք սկսում են գիտակցել, որ իրենց հակաժողովրդական և ռեակցիոն կառավարությունը փակուղու մեջ է դրել իրենց երկիրը: Նրանք ստեղծված դրությունից դուրս գալու ելք փնտրելիս իրենց ճանապարհը լուսավորված են տեսնում «Լենինականի աստղահույլերով»:

Իմպերիալիզմը գաղութային և կիսագաղութային երկրներում ոչ միայն արգելակում է տնտեսական և քաղաքական կյանքի զարգացումը, այլ ետ է տանում դեպի տեղական ժողովուրդների լիակատար քայքայումն ու անկումը:

Այդ ահաւոր քայքայման և օտարերկրյա կապիտալի ու նրան վաճառված սեփական մինիստրների դեմ ելած ժողովրդի պայքարի մասին է պատմում Գ. Սևունցը իր «Թեհրան» վեպում:

Հիմնականում ընդգրկելով Իրանի հասարակական ամենատարբեր շերտերի նկարագրութունը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, մերկացնելով անգլիական, ամերիկյան և գերմանական «միսիաների» ներկայացուցիչների ու խորհրդատուների գրգռելու ոգը իրանական նավթի համար, նրանց ստոր դավերը և ինտրիգները, նրանց լրտեսական գործունեութունը, շանտաժը և տեւորը, Սևունցը ցույց է տալիս, որ Իրանի շահը և մինիստրները խաղալիք են անգլիական, ամերիկյան և գերմանական գործակալներ՝ Կրիպպսի, Բենտոնի, Մեյերի արշունոտ և ամեն ինչի ընդունակ ձեռքերում:

Այդ վաճառված մինիստրներից յուրաքանչյուրն իր անձնական շահից դրդված դառնում է այս կամ այն իմպերիալիստական երկրի ներկայացուցչի փաստորեն լրտեսը: Այդ ինտրիգների մեջ են ներգրավվում նաև նրանց կանայք և հաճախ հակառակ «բանակի» ներկայացուցիչներ են դառնում նույն ընտանիքի անդամները: Ամերիկա-անգլիական իմպերիալիստների ձեռքին խաղալիք դարձած Իրանը վառոդով լի տակառ է, որը կարող է պայթել ամեն րոպե: Սակայն գոյութուն ունի նաև հակառակ բանակը՝ ժողովրդական մասսաների բանակը, որի ղեկավարութունն իրենց ձեռքն են վերցրել Իրանի կոմունիստները՝ Թեհրանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկայի դասախոս Շամս Աղադիի և կոմունիստական «Արշալույս» թերթի խմբագիր Շովքաթի ղեկավարությամբ:

Վեպում այսպիսի մի բնորոշ տեսարան կա: Ազա-
դիի և Շովքաթի զինակիցներից մեկը՝ Զաբին, խուսա-
փելով ժանդարմերիայի հետապնդումներից, ծպտյալ
կերպով Թեհրանից գալիս է Աբադան, Պարսից ծոցի
հյուսիսակողմում գտնվող այդ նավահանգիստը և կըղ-
զին, որտեղ գտնվում է Անգլո-իրանական նավթային
կամպանիայի սեփականություն հանդիսացող նավթու-
ղու վերջնական կետը: Այդտեղ են անգլիական իմպե-
րիալիստները նավթաշտիչ գործարաններում մշակում
նավթը և, աշխարհի տարբեր կողմերն ուղարկելով այն,
ոսկիներ դիզում ամենադաժան կերպով շահագործվող
ժողովրդի հաշվին: Աբադանի ծայրահեղ թշվառության
մեջ տառապող բանվորներից է նաև Զաբիի հորեղբոր
որդի՝ Հաշիմը, որն իր վրա զգալով անգլիական իմպե-
րիալիստների շահագործման ամենածանր հետևանք-
ները, չի տեսնում ոչ մի ելք: Զաբին նրան ցույց է տա-
լիս այդ ելքը՝ գաղութարարների դեմ բանվորների հա-
մախմբված և միասնական պայքարի միջոցով բոլոր
շահագործողներին երկրից դուրս վռնդել, երկրի բոլոր
հարստությունների տերը դառնալ և ստեղծել այնպիսի
պայմաններ, որպիսիք իրենց մոտ ստեղծել են Սովե-
տական Միության աշխատավորները:

Զաբիի պատմած ճշմարտությունը Սովետական
երկրի աշխատավորների երջանիկ կյանքի մասին, որը
օդի և ջրի պես սովորական բան է դարձել սովետական
քաղաքացիների համար, անիրականալի հեքիաթ է թվում
Հաշիմին: Եվ ահա ողջ աշխարհի առաջավոր և պրոգրե-
սիվ մարդիկ և նրանց ավանգարդում պայքարող կոմու-
նիստներն իրենց երկրի աշխատավորներին ասում են
ճշմարտությունը Սովետական Միության ժողովուրդնե-
րի մասին և լուսավորում այն ուղիները, որոնք տանում

են դեպի խաղաղության և Սովետական երկրում իրականացած երջանկության նվաճումը, դեպի սոցիալիզմի հաղթանակը:

Այս լուսավոր ուղիներով են տանում իրանական ժողովրդին «Թեհրան» վեպի լավագույն հերոսները՝ դոկտոր Շամս Ազադին, Շովքաթը, Տիգրանը, գյուղացիական ապստամբությունների ղեկավար Շիր Բահրամը, բանվոր Աքաբերը և մյուսները:

Պայքարի ելած իրանական ժողովրդի համար Սովետական Միությունը հույսի պատվար է ու փրկության փարոս, և միանգամայն պատահական չէ, որ ճշմարտությունը Սովետական Միության մասին, որը ժողովրդի մեջ տարածում են իրանական կոմունիստները և պրոգրեսիվ գործիչները, իմպերիալիստներին վաճառված իրանական կառավարության ժանդարմերիայի կողմից ամենածանր քաղաքական հանցանք է համարվում:

Վեպում գործող ժողովրդական հերոսների պայքարի ամենադժվարին պահերին, նրանց համար թե ու թիկունք է Սովետական Միությունը: Ազադիի զինակիցներից մեկը՝ Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողուհի Սուրիա Մաշարը սովետական զորքերի Թեհրան մտնելու նախօրեին արտահայտում է աշխատավոր ժողովուրդների համար գիտակցություն դարձած սրբազան և մեծ ճշմարտությունը Սովետական Միության խաղաղասիրական էության մասին. «Թանի սովետական զորքը մեզ մոտ է եկել, այստեղ (Իրանում — Ս. Ս.) կռիվ չի լինի»:

Որքան ավելի է լայնանում ու խորանում աշխարհի ժողովուրդների այս գիտակցությունը, այնքան ավելի է հզորանում խաղաղության լագերը, այնքան ավելի են

կասեցվում պատերազմի ամերիկա-անգլիական հրձիգ-
ների փորձերը՝ վարակել ժողովուրդներին նոր պատե-
րազմի թույնով:

Սևտոնցը իր վեպում պատմում է, թե ինչպիսի վայ-
նասուն է բարձրացնում Իրանի ռեակցիոն մամուլը
Ազադիի «Արշալույս» թերթում տպագրված հոդվածի
առթիվ: Ազադին խիստ քննադատության է ենթարկում
մանուկներին հրամցվող պատմության՝ դասագրքերը,
որոնցից Սովետական Միության մասին միայն այն
կարելի էր իմանալ, որ նա «գտնվում է հյուսիսում և որ
այնտեղ իշխանությունն անցել է բոլշևիկների ձեռքը»:
Այսօր ամերիկա-անգլիական իմպերիալիստները Սո-
վետական Միության մասին հերյուրվող ամենաստոր և
գարշելի ստի ու կեղծիքների միջոցով ձգտում են մո-
լորեցնել իրենց ենթակա ժողովուրդներին և նրանց
«թնդանոթի միս» դարձնել համաշխարհային պատե-
րազմի համար: 1953 թ. փետրվարի 4-ի «Պրավդա»-ում
տպված «Ամերիկյան կեղծարարների զուր ջանքերը»
հոդվածում թերթի սեփական թղթակիցը Նյու-Յորքից
գրում է այն հրեշավոր ստի ու կեղծիքների մասին,
որոնցով լցված են ԱՄՆ-ի էնցիկլոպեդիաները, մաս-
սայական տեղեկագրերը և պատմության դասագրքերը:
Այդ աղաղակող զրպարտությունը հասնում է այն բա-
նին, որ նրանք միջնակարգ դպրոցների համար լույս
տեսած «Համաշխարհային պատմություն» դասագրքում
Ստալինգրադի ճակատամարտի մասին սահմանափակ-
վում են միայն մի ողորմելի ֆրազով:

Ամերիկյան իմպերիալիստներին վաճառված գըր-
չակները ջանում են ամերիկացիների և անգլիացիների
գիտակցությունից ջնջել Ստալինգրադի հետ կապված
ամեն մի հիշողություն, որպեսզի հեշտացնեն պատե-

րազմի հրձիգների սև գործը, սակայն ինչպես համայն աշխարհի, նույնպես և ամերիկյան ժողովրդի գիտակցության մեջ Ստալինգրադն անջնջելի և լուսավոր հետք է թողել: Ազատասեր և խաղաղասեր մարդկանց խանդավառ սերն է արտահայտում դեպի սովետական ժողովուրդների անսլարտելիության սիմվոլ հանդիսացող Ստալինգրադը այցելած ամերիկյան պրոֆմիսթենական դելեգացիայի ղեկավար Լեոն Ստրաուսը Ստալինգրադի Քաղսովետին ուղղված իր 1951 թ. նամակում. «Նույնիսկ այս երկար տարիներից հետո,— ասում է նա,— որոնք լի են ձեր քաղաքի և ձեր ժողովրդի մասին տարածվող խառնաշփոթություններով և կեղծիքով, մենք պահպանել ենք հիշողությունը Ստալինգրադի տակ ցուցաբերված Սովետական Բանակի և ձեր ժողովրդի հերոսության մասին: Ամերիկյան զինվորները և նրանց ընտանիքները, որոնցից շատերը սպանված կլինեին գերմանական հրանոթներով, եթե նրանց ուսաները չլեցնեին Ստալինգրադի տակ, հավերժ երախտապարտ են ձեր քաղաքին այն սխրագործության համար, որը կատարեց նա հանուն մարդկության...»: Իսկ 1950 թ. Սովետական Միություն այցելած խաղաղության կողմնակիցների ամերիկյան դելեգացիայի անդամ Ժակելինա Կլարկը գրում է. «ՍՍՌՄ-ում կատարած ուղևորության ժամանակ ամենից խորը տպավորությունն ինձ վրա գործեց Ստալինգրադը: Արդեն միջնում էր, երբ մենք բարձրանում էինք Ստալինգրադի Մամաև Կուրգանը, որտեղ շրջադարձ կատարվեց ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի ընթացքի մեջ, որտեղ փրկվեց քաղաքակրթությունը: Երբ մենք հասանք Կուրգանի գագաթին և նայում էինք հերոս-քաղաքին, ես զգում էի, որ կանգնած եմ սրբազան հողի վրա... Այն, ինչ ես տեսա՝ պա-

տերազմի ավերածությունները և ժողովրդի հերոսությունը խաղաղ վերականգնման գործում, ավելի քան որևէ այլ բան ինձ համոզեց, որ մենք չպետք է հանդուրժենք նոր պատերազմ:

Խաղաղությունը պետք է հաղթի պատերազմին»:

Ազատասեր և խաղաղասեր մարդկանց հույզերն է արտահայտում Ստալինգրադի մասին Ն. Զարյանը 1951 թ. գրած իր «Ապագա ծովի հատակում» ակնարկում, երբ գրում է, որ այսօրվա «Ստալինգրադում բարձրացող նորակառույցների տակ թաղված է համաշխարհային երկրորդ պատերազմը»: Այնուհետև Զարյանը պատմում է հետևյալ արժանահիշատակ հուշը:

1942 թվականի հունվարն էր: Սովետական Բանակը Մոսկվայի մոտ արդեն թշնամուն հասցրել էր առաջին հարվածը: Ինքը՝ հեղինակը Ա. Իսահակյանի հետ գնացքով, Ստալինգրադի վրայով գնում էին Մոսկվա, մասնակցելու Գրողների միության պլենումին:

«Խաղաղ, ամպամած ձմեռային օր էր, — գրում է Զարյանը, — կապտագույն երկնքի տակ իր ծխնելույզների անտառով ծխում էր հզոր ու վիթխարի քաղաքը: Ծերունի բանաստեղծն իրեն հատուկ ինքնահույզ հայացքով երկար նայեց վագոնի լուսամուտից և դարձավ դեպի ինձ.

— Սովետական Միությունը կշախջախի Հիտլերին:

— Ստալինգրադն է այդ ասում:

— Այո:

Ստալինգրադը դուցազնական ըմբիշի պես բռնեց ֆաշիստական ցուլի պողպատե եղջյուրներից, հռչակած, արյունով կրճբով դիմադրեց նրա ահուկի ճնշմանը և փշրեց նրա ողնաշարն ու եղջյուրները: Այժմ նա բուժում է իր վերքերը, բարձրանում է իր մոխիրներից՝

դառնալով առավել հզոր ու գեղեցիկ: Հիտլերի անդըր-օւլկիանոսյան ժառանգորդները պատերազմի փլատակների վրա բարձրացող այս յուրաքանչյուր պալատի համար ատոմային ռումբ են ձուլում: Բայց ստալինգրացիները կառուցում են խաղաղության փողոցը, որ սկիզբ է առնում «Զոհված մարտիկների հրապարակից»: Ստալինգրադը խաղաղություն է տոնում և խաղաղություն է պահանջում. նա, որ հաղթել է բոլոր պատերազմների մեջ:

Նվ եթե այս պահին այստեղ լինեիր հայ ժողովրդի մեծ բանաստեղծը, եթե նա տեսներ կապույտ երկնքի տակ շնչող ծխնելույզների այս անտառը, արևից փայլատակող կորպուսների մետաղե կողերը, Ստալինյան պողոտայի վրա սպիտակին տվող այս հոյակապ շենքերը, և այն անսահման խաղաղությունը, որի մեջ կանգնած է վերակառուցվող Ստալինգրադը, այս անգամ էլ ազնիվ մի ներշնչումով կբացագանչեր.

— Ստալինգրադը կհաղթի պատերազմին»:

Այսպես են դատում և մտածում նաև համայն աշխարհի առաջագետ, ազնիվ և ազատասեր մարդիկ, որոնց գիտակցությունն անզոր են մթազնել ամերիկա-անգլիական իմպերիալիստներն իրենց ստերով և կեղծիքներով: Հասկանալի է, թե Գ. Սեռնցի «Թեհրան» վեպը, սովետական գրողի և ողջ աշխարհի յուրաքանչյուր պրոգրեսիվ գրողի երկը, որը մերկացնում է ամերիկա-անգլիական հրձիգների ավանտյուրաները, որքան մեծ գործ կարող է կատարել խաղաղության պաշտպանության ու պատերազմի հրձիգների սուտն ու կեղծիքը ցրելու գործում, այսօրվա Իրանում և ողջ Արևելքի ու Արևմուտքի իմպերիալիզմի կախյալ երկրներում վխտացող ամերիկա-անգլիական գործակալներ Բենտոնների,

Կրիպաների, Վուլվորտների և իրանական ժողովրդի թշնամիներ Սիահիուշների և Ղորանիների դիմակա-
զերծման ասպարեզում:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, երբ սովետական զորքը մտնելով Իրան և այլ երկրներ, իր հետ խաղաղություն ու ազատություն էր տանում: ԱՄՆ-ի և Անգլիայի զորքերը կառավարող ռեակցիոն շրջանների թելադրանքով կիսազաղութային և դաղութային երկր-
ներում դրսևորում էին իրենց մղած պատերազմի նվա-
ճողական բնույթը: Ամերիկա-անգլիական զորքերի հրա-
մանատարությունը, կատարելով իր տերերի կամքը,
վարում էր պատերազմը հնարավարության շափ ձգձգե-
լու տակտիկան, որպեսզի պատերազմը հավասարապես
թուլացներ և՛ գերմանացիներին, և՛ Սովետական Բա-
նակը, որը հնարավորություն կտար նրանց հանդես գալ
աշխարհին իրենց կամքը թելադրելու դերում:

Անգլո-ամերիկյան բանակում նշանակալից աչք զինվոր-
ները, որոնք ռազմադաշտ էին եկել Ֆաշիզմի դեմ կռու-
վելու ազնիվ նպատակով, ակնառու կերպով տեսնելով
հրամանատարության ռազմախաղը, ըմբռնելով, որ այդ
հրամանատարությունը փաստորեն կատարում է պա-
տերազմի մեջ միայն բիզնես տեսնող իրենց կառավա-
րության հրահանգները, համոզվում են, որ Ֆաշիզմի և
պատերազմի դեմ միակ հետևողական պայքարը մղում
է Սովետական Բանակը: Զինվորների քաղաքական դի-
տակցության այդ արթնացմանը մեծապես օգնում են
կոմունիստ ընկերները: Ահա այդ է Ս. Ալաջաջյանի
«Անապատում» վիպակի իդեալական բովանդակությունը:
1942 թվականին, Տոբրուկի անկումից հետո բրիտանա-
կան մի փոքրիկ վաշտի նկարագրության միջոցով հե-
ղինակը կարողանում է ցույց տալ խաղաղություն երա-

զող տարբեր ազգությունների պատկանող զինվորների (նեգրեր, ավստրալիացիներ, հնդիկներ, եգիպտացիներ, սիրիացիներ, նոր-գելանդացիներ, իտալացիներ, անգլիացիներ, հայեր), և պատերազմը ձգձգելու տակտիկա վարող հրամանատարության միջև հասունացող կոնֆլիկտը:

Ավստրալացի Սամը, եգիպտացի Քասիմը, նեգր Քոմոն, հնդիկ Հուբերտը և 40 այլ մարտիկներ ջրբաժանի մի կողմում, և մայոր Զեֆը ու նրա մանկավիհներ՝ ավստրալիացի Ֆրոստը և անգլիացի Հարրի Լին ջրբաժանի մյուս կողմում, այդ երկու հակադիր ուժերի ներկայացուցիչներն են հանդիսանում: Տարբեր ազգությունների պատկանող զինվորների գլուխն են կանգնած կոմունիստներ՝ իտալացի սերժանտ Պանսոն, անգլիացի Միլլերը և հայ Արազյանը: Հեղինակը կարողանում է այդ մի վաշտը ամուր թելերով կապել արտաքին աշխարհի հետ: Մայոր Զեֆը ողջ հրամանատարության, իսկ զինվորները գաղութային երկրներում կապիտալիզմի տակ հեծող և արդեն պայքարի ելնող ժողովուրդների տիպական ներկայացուցիչներ են հանդիսանում: Հեղինակը իրադարձությունների ընթացքում դրսևորվող և զարգացող թե՛ դրական և թե՛ բացասական կերպարների քանդակային ռելյեֆ կերտումով, նրանց հոգեբանության ցայտուն վերարտադրության միջոցով կարողացել է մարմնավորել վեպի հիմքում ընկած գաղափարը: Զինվորների սոցիալական հավասարության տենչանքը և խաղաղասիրությունն ատելություն են սերմանում դեպի հրամանատար Զեֆը, որի մեջ նրանք տեսնում են Անգլիայի գաղութարար քաղաքականությունը պատերազմի պայմաններում կիրառող բոլոր այն հրամանատարներին, որոնք իրենց գործելակերպով բացա-

հայտում են անգլիական-իմպերիալիստների ֆեոֆյունը: Մայոր Զեֆը իբր հիվանդության պատճառով սպանում է եգիպտացի զինվորներ Հասան Կասասսին, Գալահերին, ընդհանրապես զինվորների հետ վարվում է ինչպես անասունների հետ, ընտրյալ մանկլավիկներով կտրում է իրեն զինվորներից, անգլիացի զինվորներին հավաքելով իր շուրջը՝ փորձում է կազմակերպել նրանց փախուստը և այլազգի զինվորներին թողնել լիվիական անսահման ավազուտների մեջ, կազմակերպելով տեղական բնակչության պարենամթերքների թալանը, սննդով ապահովում է միայն իր մերձավորներին. այս ամենն աստիճանաբար բացում է զինվորների աչքերը ոչ միայն Զեֆի, այլև ընդհանրապես Անգլիայի կողմից մղվող պատերազմի բուն էության վրա: Եգիպտացի Քասսիմի խոսքերն այն մասին, որ «կովում են իրենք՝ գաղութների կախյալ ժողովուրդները, իսկ պատերազմում Անգլիան»՝ վկայում են բոլոր զինվորների գիտակցության արթնացումը: Հեղինակը զինվորների գիտակցության այդ արթնացումը ցույց է տալիս նրանցից յուրաքանչյուրի յուրահատուկ անհատական խառնվածքի և ազգային առանձնահատկությունների բացահայտմամբ: Բրիտանական զորքերի գաղութարարային նպատակով մղվող պատերազմին հեղինակը Արազյանի, Պանսոյի և Զո Միլլերի շուրթերով հակադրում է սովետական ժողովրդի արդարացի, համաժողովրդական, իսկական հայրենասիրական պատերազմը: Պատերազմի դպրոցում բացվում են զինվորների աչքերն աշխարհի վրա. հանձին Զեֆի նրանք ճանաչում են ամբողջ «զեֆական վերնախավը», բրիտանական գաղութարարներին, իսկ հանձինս Պանսոյի, Արազյանի և Զո Միլլերի՝ կոմունիստներին, որոնց նպատակն է արդարացի

կարգեր ստեղծել ամբողջ աշխարհում: Վիպակի վերջում փոքրիկ վաշտի զինվորները նկարագրվող իրադարձությունների ազդեցության տակ, այդ իրադարձությունների գիտակցումով, կոմունիստ զինվորների ամենօրյա հոգատար վերաբերմունքի շնորհիվ հանգում են այն ճշմարտությանը, որ Անգլիայի միացած պատերազմի նպատակն է դադարեցնել ժողովուրդների շահագործումը և որ կա երջանկության մի ճանապարհ՝ դա «սլայքարն է պատերազմի դեմ, պատերազմ պատրաստող հասարակարգի դեմ», ինչպես ասում է վիպակի հերոսներից մեկը: Ընթերցողը, ավարտելով վեպը, համոզվում է, որ վիպակի հերոսների՝ զինվորների համար դա արյան գնով ձեռք բերված ճշմարտություն է, որ կյանքի այդ ուղին նրանք ընտրել են մեկ անգամ ընդմիշտ և հետպատերազմյան պայմաններում նրանք կլինեն խաղաղության մարտիկներ:

Ամերիկա-անգլիական իմպերիալիստների գիշատիչ էության և Սովետական Միության խաղաղասիրական էության գիտակցումով աշխարհի բարի կամքի տեր մարդկանց խաղաղասիրական լազերի անցնելու պրոցեսն է նկարագրում երիտասարդ արձակագիր Կ. Սուրենյանն իր «Մեծ քննությունը» և «Մաքուր ձեռքեր» պատմվածքներում:

Այս երկու պատմվածքներում էլ Սուրենյանը ցույց տալով իր հերոսների զարգացումը հանգամանքների ազդեցության ներքո, կարողանում է պատճառաբանել նրանց հոգեբանության մեջ կատարվող բեկումը: Հեղինակը դրամատիզմ է հաղորդում այդ պատմվածքների ֆաբուլայի զարգացմանը, կոմպոզիցիան դարձնում կուռ և նպատակասլաց: Ե՛վ «Մեծ քննությունը» պատմվածքի հերոս Զոհրաբյանի, և՛ «Մաքուր ձեռքեր» պատ-

մըվածքի հերոս Մանուկի ինքնագիտակցության զարգացման գործում վճռական դեր են կատարում կոմունիստները, Արամը և Ալեկոն, սակայն այդ ազդեցությունը պայմանավորված է իրենց, հերոսների կենսափորձով: Արամը և Ալեկոն օգնում են Զոհրաբյանին և Մանուկին գիտացկել այդ կենսափորձը և համապատասխան եզրակացություններ անել իրենց հետագա գործողությունների մասին՝ դառնալ խաղաղության ժամանակակից շարժման ակտիվ մարտնչողներ: Նրանց ընտրած այդ ելքը, որին նրանք հանգում են, բխում է պատմվածքի ամբողջ ընթացքից և չի հանդիսանում հեղինակի կամայականության հետևանք: Այդ հանգամանքն առանձնապես անհրաժեշտ է ընդգծել, որովհետև հաճախ մեզ մոտ հանդես են գալիս արտասահմանում խաղաղության կողմնակիցների պայքարն արտացոլող պատմվածքներ, որոնց հեղինակները չեն կարողանում ստեղծել հանգամանքների զարգացման ներքին տրամաբանական կապը և կենդանի մարդկանց փոխարեն հանդես են բերում սխեմատիկ կերպարներ: Իհարկե, դրա պատճառներից մեկը կյանքի վատ ճանաչողության հետևանք է:

«Մեծ քննությունը» պատմվածքի հերոս Զոհրաբյանը, լինելով Կիպրոսի Նիկոսիա քաղաքի հայկական դիշերօթիկ կիսաբարձրագույն դպրոցի դասատու, թեև որոշ բախումներ է ունենում դպրոցի ղեկավարության հետ, այնուամենայնիվ, ներանձնանալով ընտանեկան նեղ շրջանակներում, հեռու է պահում իրեն քաղաքական կյանքից: Զոհրաբյանի մոտ դեռ պահպանվել են հավատի որոշ մնացուկներ դեպի բուրժուական հոսանիքներ:

Հետպատերազմյան իրադարձությունները մահացու հարված էին հասցրել նրա այդ պատրանքներին, սա-

Վրացն թողնելով մի ափը, նա իր մեջ այնքան կամքի ուժ
շէր գտել, որպեսզի վերջնականապես հարեր մյուս
ափին՝ պատերազմի հրձիգների դեմ մղվող դեմոկրա-
տիայի բանակին: Իր նախկին ուսանող և պրոգրեսիվ
լագերի ակտիվ մասնակից Արամի բարերար ազդեցու-
թյան տակ և միջազգային պրոգրեսիվ իրադարձություն-
ների գիտակցումով Զոհրաբյանը սկեպտիցիզմից և
պացիֆիզմից անցնում է ակտիվ պայքարի՝ հանուն
խաղաղության, ընդդեմ պատերազմի ամերիկա-անգ-
լիական հրձիգների:

Արամը Զոհրաբյանին առաջարկելով ստորագրել
Ստոկհոլմի կոչի տակ և մերժում ստանալով, կշտամբել
էր նրան, ասելով, թե ինչ պատասխան պետք է նա տա
միլիոններին: Երբ Զոհրաբյանը, սկզբում պատահաբար
և այնուհետև գիտակցած կերպով, մասնակցում է հա-
կապատերազմյան ցույցին, նա զգում է, որ հիմա նա
միլիոնների հետ է. «Ահա միլիոնների մեջ եմ, մտածեց
նա, այս անգամ ֆիզիկապես զգալով այդ»:

Բոլոր այն շարժառիթներից, որոնք պատճառ հան-
դիսացան Զոհրաբյանի բեկման համար՝ ամենավճռա-
կանն այն բանի գիտակցումն էր, որ, մի կողմից, Ամե-
րիկան պատերազմ հայտարարելով Կորեային, ցանկա-
նում էր բնաջնջել այդ ժողովրդին, ինչպես 1915 թվա-
կանին սուլթանական Թյուրքիան էր ուզում բնաջնջել
հայերին, իսկ, մյուս կողմից, սովետական երկրում
ծավալվող նոր աշխարհի կառուցումը, լսելով այդ շի-
նարարության մասին, նա բացազանչում է.

«— Այո, մեծ բան է, մեծ բան, մարդիկ իրոք կա-
ռուցում են այնտեղ... Նոր արժեքներ են ստեղծում...
Ապագան այնտեղ է, այնտեղ: Ամբողջ մարդկության
ապագան...»:

Եվ Զոհրաբյանը դառնում է խաղաղության մարտիկ, հանուն այդ նոր աշխարհի խաղաղ, ստեղծարար կառուցման պաշտպանության:

Աշխարհի հասարակ մարդկանց այդ մեծ շարժումների մեջ ընդգրկման պրոցեսն է արտացոլված նաև նույն հեղինակի «Մաքուր ձեռքեր» պատմվածքում:

Պատմվածքի հերոս, հույն կոշկակար Մանուլին գործազուրկ դառնալով և մտնելով նավահանգիստ, որպես բեռնակիր բանվոր, գիտակցության զարգացման բարդ և դժվարին պրոցես է ապրում, ի վերջո, հասկանալով և գիտակցելով այն ելքը, որը կարող է ազատել իր և իր նման տասնյակ հազարավորներին՝ ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար:

Նախկինում իրեն մենակ կարծող և այժմ իրեն զգալով պայքարող հարյուր հազարավորների բանակում, Մանուլին գալիս է այն գիտակցությանը, որ հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որ աշխատավորը լինի իր աշխատանքի տերը, նրան այդ բանում օգնում է կոմունիստ Ալեկոն, որը փաստորեն բացում է Մանուլիի աչքերն աշխարհի վրա:

Սկզբում, երբ Մանուլին կոշկակար էր, նա մշուշապատ կերպով զգում էր, որ Հունաստանի շուկաները ողողած ամերիկյան կաշին դժբախտություն է բերում իր հետ, սակայն, երբ հետազայում նա գիտակցում է այդ, որպես Ամերիկայի և Հունաստանի հարուստների գործարք, որի հետևանքը Հունաստանի աշխատավոր ժողովրդի հետադա աղքատացումն էր և, երբ նա իր աչքերով տեսնում է հայ հայրենադարձների մեկնումը դեպի Հայրենիք, որտեղ նրանց սպասում էր երջանիկ և ապահով կյանքը, ապա նա զինվորագրվում է բանվոր

դասակարգի պայքարին՝ հանուն Հունաստանի վերջնական ազատագրման:

Եվ նրա պայքարի ճանապարհին, որպես փարոս և որպես երազանք կանգնում է Սովետական Միությունը. «Մարդիկ ջարդեցին Հիտլերին,—մտածում էր Մանուիլին,— ազատագրեցին մինչև Բուլղարիա... Անշուշտ տուն են շինում, աշխատանք են տալիս: Դա խաղաղ երկրի գործ է»: Մանուիլին քաջ գիտակցում է, որ «դրսի և ներսի հարուստներն» իրենց կեղտոտ հոգիներով և կեղտոտ ձեռքերով ուզում են ստրկացնել մաքուր խղճի և մաքուր ձեռքերի տեր աշխատավոր մարդկանց, և մասնակցելով գործադուլին, համոզվում է, որ պայքարի միջոցով կարող է իրագործել իր մեծ նպատակները:

Մանուիլին արդեն հստակ կերպով երևակայում է իր վաղվա ելույթը աշխատավորների ցույցի ժամանակ, որի յուրաքանչյուր բառը կոփվել և ձուլվել է տասնյակ տարիների ընթացքում. «Ընկերներ, այս ձեռքերով պետք է հողը մաքրել ժողովրդական Հունաստանի համար, այս ձեռքերով կառուցել, այս ձեռքերով պաշտպանել: Դրա համար, ընկերներ, հարկավոր են բոլոր մաքուր և ուժեղ ձեռքերը»:

Աշխարհի բոլոր երկրներում «մաքուր և ուժեղ» ձեռքերի տեր աշխատավոր մարդկանց պայքարը՝ հանուն խաղաղության պաշտպանության, հակառակ պատերազմի հրձիգների արյունոտ նախադժերի, կստեղծի ժողովուրդների խաղաղ և երջանիկ համագործակցության պայմաններ — ահա այն գիտակցությունը, որն իրենց դժվարին կյանքի և պայքարի միջոցով ձեռք են բերում՝ գաղութային և կախյալ երկրների ժողովուրդները:

III

Ժառանգելով սովետական դրականության հիմնադիր Գորկու տրադիցիաները, սովետական դրականությունը, որպես իր հիմնական և գլխավոր հերոս միշտ հաստատել է Հոկտեմբերյան ռեոլյուցիայից հետո իր աշխատանքի տերը դարձած աշխատավոր մարդուն:

Հետպատերազմյան տարիներին խաղաղության ժամանակակից շարժման ավանդարդ հանդիսացող սովետական ժողովուրդների բազմազգ դրականությունը, հաստատելով խաղաղ աշխարհաշինությունը, հակադրվում է պատերազմի ամերիկա-անգլիական հրձիգների ռազմամոլությանը:

Հետպատերազմյան շրջանի սովետական դրականության լավագույն երկերը, որոնց մեջ բացահայտվում է կոմունիզմ կառուցող սովետական մարդու հոգեկան աշխարհի գեղեցկությունը, հզոր ղենք են հանդիսանում խաղաղության ժամանակակից շարժման մեջ ներգրաված ժողովուրդների ձեռքում:

Մեր դաշտերում և գործարաններում սոցիալիստական աշխատանքի բովում կոփվող մարդկանց հոգեբանությունն է վերարտադրվում սովետական արվեստի և դրականության մեջ, որ ընկեր Մալենկովի բառերով ասած, սովետական ժողովրդի հոգևոր կուլտուրայի

առատության ցայտուն արտահայտություններից է հան-
դիսանում:

1950 թ. դարնանն ամերիկյան մի շորսմոտորանի-
ինքնաթիռ («Յուշոդ ամրոց») խախտում է Լատվիական
Սովետական Ռեսպուբլիկայի սահմանը և սովետական
օդաչուների կողմից ստանում իր արժանի հակահար-
վածք: Դա ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից կազ-
մակերպված մի հերթական պրովոկացիոն փորձ էր՝ Սո-
վետական Միության խաղաղ սահմանների դեմ, որը
տեղին և ժամանակին կասեցվեց: Այդ օրերին «Лите-
ратурная газета» թերթում բաց նամակով հանդես
եկավ Լատվիական ապակեգործ բանվոր, Ստալինյան
մրցանակի լաուրեատ և Լատվիական ՍՍՌ-ի Գերագույն
Սովետի դեպուտատ Ժանիս Զուլմաչը: Ի լուր համայն-
աշխարհին Ժանիս Զուլմաչն իր նամակում հայտարարում
էր, որ չկա այլևս նախկին, անօգնական, փոքրիկ Լատ-
վիան և որ ԱՄՆ-ի բոլոր պրովոկացիոն փորձերը հե-
տադաշում ևս կստանան նույն հակահարվածը: Ժանիս
Զուլմաչը գրում էր, որ ինքը Հայրենական Մեծ պատե-
րազմի մասնակից է եղել և, պատերազմում տեսնելով
ռմբակոծությունից ավերված տների անապակի լուսա-
մուտները, պատերազմից հետո որոշել է համառորեն
շարունակել ապակի պատրաստել իր հայրենիքում վե-
րակառուցվող և կառուցվող տների համար: Իր զայ-
րույթը հայտնելով ԱՄՆ-ի իմպերիալիստների դեմ, Ժա-
նիս Զուլմաչը գրում է, որ այսուհետև Լատվիական
երկիրը սովետական երկիր է, Լատվիական երկիրնք՝
սովետական երկիրնք, և որ ինքը ողջ Սովետական Միու-
թյան աշխատավորության հետ մեկտեղ իր խաղաղ աշ-
խատանքով, իսկ հարկ եղած դեպքում նաև զենքով,
կպաշտպանի իր Հայրենիքի խաղաղությունը:

Բանաստեղծ Նաիրի Զարյանը հանդես է գալիս ժանիս Զուլմաչին ուղղված նամակով, որի մեջ բանաստեղծն իր համերաշխության խոսքն է ուղղում լատվիական ապակեգործ բանվորին:

«Նամակ ընկեր ժանիս Զուլմաչին» բանաստեղծության մեջ Սովետական Հայաստանի բանաստեղծ Նաիրի Զարյանի և Սովետական Լատվիայի ապակեգործ բանվոր ժանիս Զուլմաչի հոգեհարազատությունը, համերաշխությունը և պատրաստակամությունը՝ խաղաղությունը կյանքի զնով պաշտպանելու գործում՝ դա Սովետական Միության ժողովուրդների հոգեհարազատության բանաստեղծական արտահայտությունն է:

Այսպես է դիմում բանաստեղծը Զուլմաչին.

Դուր ապակու գործարանի բանվոր եր նորարար,
Իսկ ինքս, թույլ տվեք, ներկայանալ — պոետ,
Պաշտոններով էլ հարազատ ենք մենք իրար.
Այսինքն՝ գործ ունենք երկուսս էլ լույսի հետ:

Այստեղ բանաստեղծորեն բացահայտված է այն գաղափարը, որ սոցիալիզմի երկրում մտավոր և ֆիզիկական աշխատանքի հիմնական նպատակը մարդն է, նրա երջանկությունը, դա է այն լույսը, որի հետ գործ ունեն և՛ հայ բանաստեղծ Նաիրի Զարյանը, և՛ լատվիական բանվոր ժանիս Զուլմաչը, որի պաշտպանության համար ողջ սովետական ժողովուրդը միշտ պատրաստ է ոտքի ելնել մեկ մարդու նման:

Մեր խաղաղասիրությունը պասսիվ և կամազուրկ երազանք չէ խաղաղության մասին, այլ անհաղթահարելի ցանկություն, որ հաստատվում է Սովետական Միության և ողջ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների ամենօրյա աշխատանքով ու պայքարով, ցանկություն,

որը ժողովուրդների ստեղծագործական ակտիվության շնորհիվ հզորանում և ավելի պողպատակուռ է դառնում յուրաքանչյուր օր, ամեն ժամ:

Ժամանակն աշխատում է հօգուտ խաղաղասիրության բանակի, ի վնաս ռազմամուլների, և այդ իմաստով է, որ խաղաղությունը նոր աշխարհ կառուցողների համար կենսական անհրաժեշտություն է «օդից էլ, արեւից էլ ավել»:

Այդ նոր աշխարհի կառուցումը Սովետական Միության անծայրածիր սահմաններում, ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, հանդիսանում է ամենահաղթ խաղաղության ամրապնդումը: Ն. Զարյանը բարձր շնչով գրված վերոհիշյալ բանաստեղծության գաղափարը շոշափելիության չափ կոնկրետ է դարձնում Երևանի շինարարության նկարագրով: Ահա նորակառույց կարկառուն աշտարակները, քաղաքը շրջապատող լեռների նորատունկ անտառները, քարտաշների մուրճերի զարկերը, որոնք հնչում են քաղաքի թե՛ կենտրոնում և թե՛ ծայրամասերում. այդ բոլորը ողողված մանուկների կարկաչող ծիծաղով — դա դեռ բանաստեղծի լուսամուտից անմիջապես ընկալվող նոր աշխարհի կառուցման փոքրիկ պատկերն է միայն, բայց այդ մի կաթիլի մեջ էլ արտացոլվում է կարևորը՝

Մեր Հայրենիքի խաղաղասիրությունը:

Բանաստեղծը Երևանի այդ մի անկյան շինարարական պաթոսը խտացնում է քարտաշ վարպետ Վարդանի մեջ, որը պատերազմում երկու հերոս զավակ է կորցրել, բայց կրկին աննկուն կերպով նա նոր տուն է կառուցում, որովհետև նա կառուցում է իր մեծ և հզոր Հայրենիքում, իր մեծ և հզոր ժողովրդի համար: Նվ Հայրեն-

նիքի այդ հզորութունը Զարյանը կարողացել է արտահայտել հետեւյալ կերպ. վարպետ Վարդանի կառուցած տան լուամոտում կշողշողա լատվիական պայծառ ապակին, պատրաստված Զուլմաշի ձեռքերով:

Այս բանաստեղծական կոնկրետ պատկերի միջոցով Զարյանը կարողացել է արտահայտել Սովետական Միության ժողովուրդների բարեկամության դադափարը, որը հանդես է գալիս նրանց խաղաղասիրության հետ օրդանական միասնության մեջ:

Ինչպես «Նամակ ընկեր ժանիս Զուլմաշին» բանաստեղծության մեջ, նույնպես և «Տոնօրյա խոհերում» Նաիրի Զարյանը խաղաղության ամրապնդման և պաշտպանության դադափարը օրդանապես կապում է սովետական ժողովուրդների հերոսական աշխատանքի ամենահաղթ պաթոսի հետ, որը տվյալ դեպքում արտահայտված է սովետական ռեսպուբլիկաներից մեկի՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ նոր Երևանի գեղեցիկ շենքերի կառուցման ստեղծագործական եռանդով:

Խաղաղ և ստեղծագործ շինարարության շնորհիվ բարձրացող, ճարտարապետական նոր կոթողներով հարստացող Երևանը Նաիրի Զարյանը հակադրում է Սովետական Միության սահմաններից այն կողմ մոլեգնող, ամերիկյան իմպերիալիստական ոհմակների ռազմամոլությանը:

Այստեղ քաղաք է բարձրանում, ծաղկում է կյանք:

Այնինչ, օվկիանոսից այն կողմ, հեռվում,

Ատելության շվայտ սուլոցի տակ

Փնտրում են նոր ջրածնային գերուժք:

Սահմանից այս կողմ՝ ստեղծագործական ուժերի ծաղկում հանուն մարդու բարօրության, սահմանից այն

կողմ՝ իմպերիալիստների նախագծերն ընդդեմ մարդու
երջանկության, հանուն աշխարհավեր պատերազմների:
Բանաստեղծը դիմում է Միացյալ Նահանգների աշխա-
տավոր մարդկանց, որոնց համար նույնպես անընդու-
նելի է պատերազմը, քանի որ այն սպառնալիքի տակ
է դնում նրանց սեփական աշխատանքի պտուղները:

Նվ ես իմ խոսքը բոցավառ ուղղում եմ ձեզ,
Ձեզ, Միացյալ Նահանգների ճարտարապետ, բանվոր,
Դուր բարձրացրել եք Բրուկլինյան կամուրջը,
Կերտել եք դուր Բրոդվեյը լուսածեղ:
Դուր պետք է հասկանաք շինարարի ղայրույթը,
Խաղաղության մեր կոչը պետք է դուր լսեք:

Սովետական Միության ժողովուրդների ստեղծա-
րար աշխատանքը հակադրելով ԱՄՆ-ի կառավարող
շրջանների կողմից ծրագրվող իմպերիալիստական պա-
տերազմին, Նաիրի Զարյանը ԱՄՆ-ի աշխատավորներին
ուղղված խոսքերով հաստատում է այն միտքը, որ նյու-
թական բարիքներ ստեղծող յուրաքանչյուր բանվոր և
ճարտարապետ, աշխարհի որ ծայրումն էլ լինի նա, իր
ողջ ուժով պետք է հանդես գա ծրագրվող համաշխար-
հային պատերազմի դեմ: Սովետական ժողովուրդների
խաղաղասիրությունն ու նրանց հզորությունը Զարյանը
արտահայտել է հետևյալ տողերով, որոնք հարվածում
են ուղիղ նշանակետին.

Մենք առաջինը չենք նետի ումբերն ատումային,
Բայց զարկը վերջնական, հավատացե՛ք, կլինի մերը...

Նվ երբ այդ տողերին հաջորդում է բանաստեղծի
երազանքը՝ իր պատշգամբից մինչև Բրուկլինյան կա-
մուրջը տարածվող խաղաղության մասին, ապա զգում
էս, որ դա ո՛չ թե իրականությունից կտրված երազանք

է, այլ ռեալ իրականության մեջ, Սովետական Միութեան ժողովուրդների հերոսութեամբ ձեռք բերված շոշափելի նվաճում:

Աշխարհի ժողովուրդների պայքարին է նվիրված Զարյանի «Խոսք աշխարհին» բանաստեղծությունը, որի մեջ հնչում է ոչ միայն Սովետական Հայաստանի և ողջ Սովետական Միութեան աշխարհաշինությամբ խանդավառված, այլ նաև ողջ աշխարհի ժողովուրդների ազատագրական պայքարով ոգեշնչված քաղաքացու ձայնը:

Բանաստեղծը, որպես կոմունիզմ կառուցող ժողովրդի երգիչ և՛ այնտեղ է, որտեղ բարձրանում են մեր հոյակապ կառուցումները, և՛ աշխարհի բոլոր ծայրերում, ազատության ու խաղաղության համար պայքարող ժողովուրդների հետ:

Պիկսկիլում Հովարդ Ֆաստի կողքին էի կանգնած,
Երբ դիմադրում էր նա Կու-կուբս-Կլանի այն ռմակին,
Ես ուղեկցում եմ Միլանի ջուհակուհուն տարեց,
Որ տնետուն Տուլիատի կոչերն է տարածում...
... Ռալֆոնդա, ես բեզ հետ նետվել եմ ռեւերին.
Նետվել եմ, որ շանցներ պատերազմի զնացքը սև,
Պիկասսոյի աղավնու պես ճախրում է իմ հոգին
Բոլոր լարված սահմանների միջև:

Ամենուրեք շարժվել են ժողովուրդները, նրանց փարոսն է սովետական երկիրը, որը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ զնում է մի հաղթանակից մյուսը:

Այնուհետև բանաստեղծն անցնում է Աֆրիկա, Բրազիլիա, Յապոնիա և մեր առջև, ինչպես կինո-ժապավենի վրա, հանդես են գալիս պատկերներ, որոնք արտացոլում են այդ երկրների ժողովուրդների պայքարը հանուն խաղաղության: Բանաստեղծությունն ա-

վարտվում է պատերազմի հրձիգների դեմ խաղաղության կողմնակիցների Փարիզի համաշխարհային կոնֆերանսի նկարագրությամբ.

Այնտեղ հզոր եմ ես: Իմ ուսը շարունակ

Զգում է բո, նրա ուսերը համակիր.

Այնտեղ մենք մի բառով իրար կհասկանանք

Բարեհուսո հրվանդանից

Մինչև Հրո երկիր:

Այդ բառը «Կոմունիզմ» է

Կամ «խաղաղությունը»:

Նրանք վաղուց արդեն դարձել են հոմանիշ:

Դրա համար էլ յանկին պատրաստվում է

Պատառոտել երկու այդ բառն էլ...

... Շարքերը սեղմ են,

Ծառացել է մարդկությունը ողջ.

— Մենք չենք թողնի, մենք չենք թողնի,

Մենք չենք թողնի,

Որ դուք սանձազերձեք մորիկը—Ո՛չ:

Ն. Զարյանի խաղաղությանը նվիրված բանաստեղծությունները նպատակասլաց են, գեղարվեստական ձևի տեսակետից շոշափելիության չափ պատկերավոր:

Բանաստեղծ Գ. Սարյանը դեռ Հայրենական Մեծ պատերազմի առաջին օրերին, արտահայտելով արդարացի պատերազմի ելած սովետական ժողովրդի վերջնական նպատակը՝ նվաճել խաղաղություն, «Երեք կոմբայնավար» ստեղծագործության մեջ պատկերացնում է, թե ինչպես երեք ընկերներ համաձայն իրենց երդման, երկուսը ճակատում և մեկը թիկունքում, անձնվիրաբար կոփում էին Հայրենիքի հաղթանակը.

Հայրենիքի մարտերն այնտեղ թնդում էին,

Այստեղ ծփում էին արտերը հողմահար,

Այնտեղ կուլում էին, այստեղ հնձում էին

Ամեն մեկը դարձած երեք կոմբայնավար:

Եվ ահա, երբ Սովետական Բանակը հաղթեց Հայ-
րենական Մեծ պատերազմում, սովետական երկիրը
նվաճեց խաղաղությունը, Գ. Սարյանը «Սերմնացաննե-
րը» բանաստեղծության մեջ արշալույսին դաշտ դուրս
եկած սերմնացանների մասին գրում է.

Նայեց նրանց առավոտը խաղաղ ու լուռ.

Իր ծիրանին փռեց արևը դաշտերին,

Սերմնացաններն հատիկների հետ բուռ առ բուռ

Խաղաղություն էին սփռում մեր աշխարհին:

Գ. Սարյանն իրեն հատուկ բանաստեղծական ան-
միջականությամբ և ջերմությամբ երգում է խաղաղու-
թյան առավոտը, որը շտեմնված հերոսության և զոհո-
ղությունների գնով է նվաճել սովետական ժողովուրդը,
և որի մասին ինքը, որպես իր ժողովրդի հույզերի
թարգման, երազում էր Հայրենական Մեծ պատերազմի
առաջին իսկ օրերից, երբ հենց այդ առաջին օրերին
«Խոսք առավոտյան» բանաստեղծության մեջ խաղա-
ղության մոտալուտ առավոտն էր գուշակում:

Յուրաքանչյուր սովետական քաղաքացի, որն այսօր
լծված է խաղաղ շինարարության գործին, խորապես
գիտակցում է, թե ինչ թանկ գնով է ձեռք բերվել խա-
ղաղությունը, եթե նա երեկ զենքը ձեռքին է նվաճել
այդ խաղաղությունը, ապա այսօր հիշում է իր ընկած
ընկերներին, որոնց հետ միասին նրանք երազել են խա-
ղաղության այս օրը, կյանքի գնով պայքարել այդ օրվա
համար: Ահա երեկվա մարտիկի այս ապրումներն է
մարմնավորել Գ. Սարյանը «Ընկերը» բանաստեղծու-
թյան մեջ:

Հայրենական Մեծ պատերազմի առաջին ամիսներին բանաստեղծ Շիրազը տվեց երկու աշխարհների բախման խորը և իմաստալի բանաստեղծական արտայտումը.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես.

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես կկորչեք վայրագ...

Դեպի վեր խոյացող անսասան լեռների պատկերի մեջ սիմվոլացնելով Հայրենիքի անպարտելիությունը, և պատկերավոր կոնտրաստի միջոցով այդ անպարտելիությունը հակադրելով թշնամուն սիմվոլացնող վայրագ հողմերին, Շիրազը կարողացել է այդ վեց տողից բաղկացած բանաստեղծության մեջ պարզ և վճիտ բանաստեղծական պատկերներով արտահայտել խաղաղասեր սովետական ժողովրդի հզորության զաղափարը:

Այս բանաստեղծությունը, որի յուրաքանչյուր բառը հազեցված է այդ օրերի ռազմաշունչ ոգով, միևնույն ժամանակ արտահայտում է սովետական ժողովրդի խաղաղասիրությունը:

Այդ է պատճառը, որ այդ բանաստեղծության մեջ ձուլվել են ժամանակի երեք չափումների՝ երեկվա, այսօրվա և վաղվա սահմանները և խտացել այնպիսի ուժով, որ նրա վեց տողն այսօր էլ հնչում է որպես խաղաղության թշնամիների դեմ ուղղված նախազգուշացում:

Հետպատերազմյան տարիներին Շիրազը հանդես է գալիս մի շարք բանաստեղծություններով, որոնց մեջ Սովետական Միությունը, որի դաշտերի հարուստ բեր-

քը աշխարհին խաղաղություն է բերում, հակադրված է պատերազմ՝ նյութող իմպերիալիստական բանակին, որը խաղաղության դեմ «սև ուժեր է ամբարում»:

Այդ բանաստեղծություններում արտահայտված մտքերն ու խոհերը պատերազմի և խաղաղության մասին իրենց փայլուն մարմնավորումն են ստացել նրա «Մեր գյուղերի անունները» պոեմում:

Ավերի, թշվառության և սովի կնիքն է դրոշմված Հայաստանի գյուղերի հին անունների վրա: Հայաստանը այսօր ուրիշ կյանքով է ապրում Սովետական Միության ժողովուրդների ընտանիքում, այսօր նրա գերբի վրա դրոշմված մուրճն ու մանգաղը խաղաղ և երջանիկ աշխատանքի սիմվոլներն են հանդիսանում, աշխատանք, որն ապահովում է երկրի խաղաղությունն ու անպարտելիությունը: Օտարերկրյա նվաճողների և անցյալի տխուր կյանքն արտացոլող անունները, որպես վաղուց մաշված և անպետքացած հնոտիներ, Հայաստանի նոր գյուղերը նետում են պատմության աղբանոցը և մկրտվում նոր անուններով, Հայրենիքի համար զոհված հերոսների և սոցիալիստական վերածննդի երջանկությունն արտացոլող անուններով.

Էլ ի՞նչ Սև-ջուր,
Կամ ի՞նչ Սև-թուր,
Երբ Քոռ-աղբյուրն աչքը բացել՝
Աղբյուրների ալն է դարձել,—
Ուր ամեն մի ընկած հերոս
Մի աղբյուր է կարկաշահոս,
Հավերժագույն
Մի հուշարձան
Մարտիրոսված մի հերոսի,
Որ միշտ այսպես պիտի խոսի,

Թե ով խմի
Քանի զով է՝
Պատերազմը
Թող նզովես:

Սովետական Միության եղբայրական ընտանիքի իրավահավասար անդամ դառնալու պատիվը հայ ժողովուրդը նվաճել է իր հերոսական պայքարով: Նա այդ բարձր պատվին է արժանացել, որովհետև դարեր շարունակ իր լավագույն զավակների արյան գնով պայքարել է արդարացի սոցիալական կարգերի հաստատման համար մղվող հերոսամարտերում և այդ պայքարի բովում կոփվելով, ստեղծել է գեղեցկության հավերժական հմայքով օժտված արվեստի անմահ կոթողներ:

Այդ իմաստով բանաստեղծ Գևորգ Էմինի «Նոսի՛ր, Հայաստան» բանաստեղծությունը հազարամյակների խորքից եկած և սովետական դարաշրջանում վերածնված աշխատավոր հայ ժողովրդի գովքն է, որն այսօր ողջ սովետական ժողովրդի հետ միասին պայքարում է հանուն խաղաղության.

Դու, որ տանջվել ես երեսուն ձիգ դար
Եվ ասրում ես լոկ երեսուն տարի,
Ասա երգումի խոսքը բո արդար
Խաղաղության այս երթին վիթխարի:

Ուրարտական բնակավայր «Կարմիր բլուրի» պեղումների ժամանակ գտնված ածխացած ցորենի և պղնձե նիւլակի մեջ էմինը սիմվոլացնում է խաղաղ աշխատանքի և հանուն նրա պաշտպանության՝ արդարացի պայքարի անհրաժեշտ միասնության՝ գաղափարը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության ժողովուրդների մղած արդարացի

և սրբազան պատերազմը նոր լույս էր սփռում նրանց անցած պատմության վրա և նոր իմաստավորում տալիս անցած հազարամյակներին: Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիներին սովետական գրականությունն ստեղծեց մի շարք արժեքավոր պատմավեպեր, որոնց մեջ իր պատվավոր տեղն է գրավում Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը:

«Վարդանանքը» Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ողջ սովետական ժողովրդի հետ միասին արդարացի և սրբազան հերոսամարտերի ելած հայ ժողովրդի դեղարվեստական արձագանքն է: Այդ վեպում հազար հինգ հարյուր տարի առաջ մղված հայ ժողովրդի ճակատամարտը պարսից բռնապետության դեմ լուսավորված և իմաստավորված է Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած ճակատամարտերի լուսարձակով: «Վարդանանք» պատմավեպում Դ. Դեմիրճյանը պարսից բռնապետների տիրապետության դեմ ելած հայ ժողովրդի պայքարի էպիկական արտացոլման մեջ բացահայտել է պատմության իրական շարժիչ ուժը՝ աշխատավոր ժողովրդին և այդ պայքարի բովում լուսավորել նրա երազանքները սոցիալական դալիք արդարացի կարգերի, խաղաղության և ազատ աշխատանքի մասին:

Դեմիրճյանը ցույց է տալիս, թե ինչպես հայրենիքի փրկության համար ամենից հետևողական պայքարի ելնում են շինականները, որոնցից ամենաառաջավորները խանդավառ կերպով երազում են, որ մի օր «ծուռ աշխարհքը» պետք է «ոտից գլուխ» շինվի: Նրանք գիտակցում են, որ հեռու է «ռամկի դատաստանի» այդ օրը, բայց նա գալու է, քանի որ «օրերից մի օր» «աշխարհը ուռնիքն է» լինելու և այդ գիտակցությամբ է,

որ նետվում են պայքարի հանուն հայրենիքի փրկության: Այդ պայքարի բացահայտման մեջ է, որ Դեմիրճյանը կերտում է փիլիսոփայական խորությամբ և մեծ թափով օժտված հերոսական կերպարներ, որոնք այսօր էլ իրենց անձնազոհ հայրենասիրությամբ և ժողովրդասիրությամբ խանդավառում և ոգեշնչում են մեզ:

Վարդանանց պատերազմը վերարտադրելով, որպես հայ ժողովրդի տարած փաստական հաղթանակը, Դեմիրճյանը հետևյալ խոսքերով է ավարտում իր վեպը.

«Հայոց աշխարհի ձորերից ու դաշտերից խումբ-խումբ, մենակ, երբեմն և սովար զանգվածներով գալիս էին գյուղացիներ՝ զինված ամեն ինչով որ կարելի էր, գալիս էին անվերջ, սպառնալիորեն անվերջ, համալրում և զորացնում էին կռվող զորամասերը: Քանի գնում, կռվում էին մարտիկները, դառնում կատաղի, խոցող, հանդուգն: Կռվում էին հայ, վրացի, աղվան շինականները և զինվորները, կռվում էին բռնակալության դեմ ցասումով և տոկունությամբ, կռվում էին խաղաղության և արդարության երազով:

Այդպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...»:

Եվ եկավ 19-րդ դարը, երբ հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարը միացրեց ռուս մեծ ժողովրդի ազատագրական պայքարին՝ ուղղված ամեն տեսակ ներքին և արտաքին շահագործողների դեմ:

Երբ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան ռևոլյուցիան, հայ աշխատավոր ժողովուրդն առաջիններից մեկն էր, որ պայքար ծավալեց հանուն սովետական կարգերի հաստատման, հանուն ազատ և խաղաղ աշխատանքի տիրապետության:

Հանդիսանալով խաղաղության ժամանակակից շարժման ամենաակտիվ մասնակիցներից, Դ. Դեմիրճ-

յանը հետպատերազմյան տարիներին իր «Տուն» պատմըվածքի հերոս, հայրենադարձ Արթինի կերպարի մեջ կարողանում է լայն ընդհանրացման ճանապարհով խտացնել հայ ժողովրդի պատմական բախտը: Արթինը, արդար աշխատանքի մարդ լինելով, Թյուրքիայում և Սիրիայում ապրած ժամանակ, տարիներ շարունակ երազում էր հաստատ հիմքերով տուն ունենալու մասին: Անվերջ հալածանքների ենթարկվելով, նա միշտ բնավեր էր լինում և չէր կարողանում իրականացնել իր երազանքը: Արթինը վերջապես գալիս է այն համոզման, որ հաստատ տուն ունենալու համար հարկավոր է Հայրենիք ունենալ: Վերջին անգամ 1928 թ. Հալեպում նրան հաջողվում է իր ընտանիքի համար երկհարկանի տուն շինել: Տունը կարծես ուներ բոլոր հարմարությունները, սակայն Արթինը վճռել էր տան դուռը կիսատ թողնել: Իր կնոջ թախանձանքներին՝ ավարտել տունը լիովին, Արթինը պատասխանում էր. «Հայրենիք պիտի ունենանք, որ տուն ունենանք, տունն ալ դուռ ունենա...»: Արթինը հետևում է Սովետական Հայաստանի մասին շրջող լուրերին և գալիս է այն վերջնական եզրակացության, որ դա ժողովրդի և արդարության երկիր է: «Մեկ Հայաստան կա: Ան Հայաստանը, որու տերը հայն է, որը ազատ է: Սովետ Հայաստան», — ասում է նա իր զավակներին: Պայթում է համաշխարհային երկրորդ պատերազմը: Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակում է սովետական ժողովուրդը: Սկսվում է հայերի հայրենադարձությունը և Արթինն իր ընտանիքով գալիս է Հայաստան: Երևան գալով, նա որոշում է. «... Ահա, եկանք տուն: Ես տեսա տունս: Դրախտ պիտի շինեմ հոս»: Իր տան ամեն մի

քարի տակ նա անդարձ կերպով թաղում է անիծյալ ան-
ցյալի դառը հուշերը:

Արթինի զավակներն սկսում են աշխատել և սովոր-
եցել, օրերով բացակայում են տնից, ավարտելուց հետո
որոշում են տեղափոխվել Հայաստանի մյուս քաղաք-
ները և շրջանները: Արթինը, որին թվում է, որ նա
դարձյալ կորցնում է իր տունը, սկսում է ըմբռնել, որ
տուն հասկացողությունը հարստանում է բոլորովին
նոր բովանդակությամբ, որ իր տունն այն լայնածավալ
երկիրն է, որը կոչվում է Սովետական Միություն: «... Ես
ձեզ համար այս տունը շինեցի,— ասում է նա իր զա-
վակներին,— դուք ալ ինձի համար ավելի մեծը շինե-
ցեք: Ապրեք, ասկե ետքը ձեր խոսքը ըլլա, տուն՝ Հայ-
րենիքն է»:

Սովետական երկրում է միայն, որ Արթինը կարո-
ղանում է իր արդար աշխատանքի վաստակի տերը
դառնալ, Սովետական երկիրն է, որ հանդիսանում է
աշխատավոր մարդու երազած խաղաղության անխոր-
տակելի պատվարը:

Հաստատ տուն չունենալու միտքը հայ ժողովուրդը
անցյալում մարմնավորել է ծիծեռնակի պատկերի մեջ,
այսօր հայ ժողովրդի համար նա դարձել է նվաճված
խաղաղության սիմվոլ:

Հայ գրականությունը ծիծեռնակի պատկերի մեջ, Դո-
դոնյանի մոտ մարմնավորել է հայրենասիրության, իսկ
Աղայանի մոտ աշխատասիրության և աշխատավոր ժո-
ղովրդի անմահության գաղափարը: Սովետահայ բա-
նաստեղծ Հր. Հովհաննիսյանը ծիծեռնակի պատկերի
մեջ մարմնավորում է սովետական հայրենասիրության
և նվաճված խաղաղության գաղափարը: «Ծիծեռնակը»
բանաստեղծության մեջ նա գրում է.

Ճախրում է նա, սուրում նետի նման,
ժամանակն է թևով ճեղքում, կարծես,
կարծես այդ նա լինի, որ աննման
Դոդոխյանի երգից հասել է մեզ:
Ճախրում է նա, սուրում, ճշում անհոգ,
կրում խաղաղության կոշը վառման...

«Խաղաղության ձայները» բանաստեղծության մեջ
Հր. Հովհաննիսյանը երգում է Սովետական Հայաստանի
խաղաղ ստեղծագործական կյանքը.

Կյանքի ստեղծարար ձայներն են ողողում
Մարդու հոգին, օդը, բնությունը համայն,
Իմ Հայաստան երկրի բոլոր ոստաններում
Ղողանջում է հզոր զանգը խաղաղության:

.

Խաղաղ այդ ձայնին է այսօր արձագանքում
Հայաստանը, որ միշտ տենչացել է անդորր,
Ու կանգնել է անսաստ խաղաղության դիրքում
Հայ ժողովուրդն, իբրև հավատարիմ զինվոր:

Սովետահայ բանաստեղծները, գովերգելով Սովե-
տական Հայաստանը, երգում են ողջ Սովետական Հայ-
րենիքը, բոլոր խաղաղասեր ժողովուրդներին: Գ. Բոր-
յանը «Երգ խաղաղության» բանաստեղծության մեջ երե-
վանյան գարնան դուլքը վերածում է Սովետական Հայ-
րենիքի և խաղաղության գուլքի:

Խաղաղություն՝ մարդուն, հոգին,
Խաղաղություն՝ աշխարհներին.

Ի՛նչ վսեմ է հնչում երգը մեր կառուցման,
Ի՛նչ պայծառ է խորհուրդով լի Մայիսը մեր,
Եվ ինչ թանկ է ժպիտը մոր, ձայնը մանկան,
Եվ ինչ զվարթ երևանը գարնանաբեր:

Հայրենի հող, բեղանից թանկ շունեմ ոչինչ
Այս աշխարհում, դու ապավեն միլիոնների,
Քեզանով է օրը վաղվա հստակ ու ջինջ,
Քոնն է պատգամն խոսքով արդար, մտքով խորին—
 Խաղաղություն՝ մարդուն, հոգին
 Խաղաղություն՝ աշխարհներին:

Խաղաղության այս գովերգման մեջ բանաստեղծը խոսում է յուրաքանչյուր սովետական քաղաքացու համար ամենանվիրական զգացմունքների մասին՝ կառուցման երզի, մայրերի ժպիտների, մանուկների ձայների, դարնանաբեր մայրաքաղաքների մասին: Ահա այդ ամենն է ընդհանրանում այն «Հայրենի հողի» մեջ, որը միլիոնների ապավենն է հանդիսանում: Այդ հողի խաղաղությունը՝ դա աշխարհների խաղաղությունն է:

«Աղբյուր-հուշարձանի առաջ» բանաստեղծությունն մեջ էմինը, օգտագործելով Սովետական Հայաստանի համար բնորոշ աղբյուր-հուշարձանները որպես Հայրենիքի սիմվոլ, իր պարզ և անմիջական զրույցը Սովետական Հայաստանի նոր կյանքի այդ կոթողներին այցի եկած անցորդի հետ վերածում է երդման՝ կյանքի գնով պաշտպանել Հայրենիքը և խաղաղությունը: Սկզբում բանաստեղծը դիմելով աղբյուր-հուշարձանին, ասում է, որ հայկական լեռնաշխարհի բոլոր գյուղերումն էլ կարկաչում է այդպիսի առու, Հայաստանի երգերի պես անարատ: Աղբյուր-հուշարձանի ջրի անարատությունը համեմատելով Հայաստանի երգերի անարատության հետ, էմինը շնչավորում է այն և ստեղծում գեղարվեստական պատկեր, որի միջոցով արտահայտում և բացում է հենց ղեռն իրականության մեջ գոյություն ունեցող աղբյուր-հուշարձանի դերի և նշանակության գաղափարական իմաստը: Հայրենական Մեծ պատերազմի

տարիներին ստեղծվում են աղբյուր-հուշարձաններ ի հիշատակ Հայրենիքի համար զոհված հերոսների, որոնք վեր են ածվում ճարտարապետական կոթողների: Էմինն ի մի ձուլելով աղբյուր-հուշարձանի այդ երկու կոշտը՝ ընկածներին հուշարձան և աղբյուր լինելու հանգամանքը՝ աղբյուրից հոսող ջրի պատկերի մեջ պատկերավոր կերպով հնչեցնում է հերոսների ձայնը, այն հերոսների, որ թեև ընկան «մեր գյուղից ու հանդից հեռու», բայց հանուն այս ակնաղբյուրի ջրի անարատության: .

Որ ոտխը չպղտորեր

Այս աղբյուրի ակը խորունկ...

Եվ ահա զոհելով իրենց կյանքը հանուն այդ ակնաղբյուրների ջրի անարատության, նրանք անմահացան և ակնաղբյուրները վերածվեցին նրանց անունը հավերժացնող աղբյուր-հուշարձանների:

Բանաստեղծը դիմում է անցորդին՝ ուշադիր ունկընդրել այդ ձայնին, որն ի լուր համայն աշխարհի արտահայտում է երկու սրբազան բառ՝ խաղաղություն և խաղաղություն:

Ավարտելով, բանաստեղծը դիմում է անցորդին՝ երգվել աղբյուր-հուշարձանի առջև.

Բայց երգվի՛ր այս զուլալ ջրին՝

Այնպես անցնել կյանքիդ ճամփան,

Որ ոչ մի ձեռք չպղտորի

Նրա ակունքն անապական:

Սովետական Ժողովուրդն իր զավակների կյանքի գնով նվաճելով խաղաղությունը, այսօր փառքի հուշարձաններ է կանգնեցնում իր զավակներին և երգվում է այդ հուշարձանների առջև, որ առաջիկայում էլ նույնպիսի հերոսությամբ նա կպաշտպանի խաղաղությունը:

Սովետական ժողովրդի նվաճած խաղաղության և
այդ խաղաղությունը հերոսական աշխատանքով ամրա-
պնդելու գաղափարն է արտահայտվում Ս. Խանդադյա-
նի «Յոթերորդ աղբյուրը» պատմվածքում: Հայաստանի
լեռներում բարձրացող փոքր քաղաքներից մեկում ապ-
րող որմնադիր վարպետ Մարգարը վեց աղբյուր էր շի-
նել և իր որդուն՝ նորավարտ ճարտարապետ Արամի նա-
խագծով ուղղում էր կառուցել և յոթերորդը, երբ Հայրեն-
նիքի վրա հարձակում գործեցին գերմանական ֆաշիստ-
ները, և Արամը գնաց Հայրենիքը պաշտպանելու: Վար-
պետ Մարգարը և նրա կինը՝ Մանուշակը, ապրում էին
Արամից ստացած նամակներով, և մի օր էլ «Արամի
նամակները կտրվեցին ցամաքած աղբյուրի նման»:

Եկավ հաղթանակը, բայց Արամից լուր չկար... Եվ
մի օր էլ շրջկոմի քարտուղարը և զինկոմը Մարգարի
տուն եկան և սեղանին դրին մի կարմիր բարձիկ, վրան
ամրացրած Հայրենական պատերազմի առաջին աստի-
ճանի շքանշան: Ամեն ինչ պարզ էր առանց խոսքի...
Այդ օրը վարպետ Մարգարը որոշեց կառուցել յոթերորդ
աղբյուրը՝ Արամի թողած նախագծով: Եվ Մարգարը,
վերհիշելով և վերապրելով Արամի ամբողջ կյանքը, կա-
ռուցեց յոթերորդ աղբյուրը՝ որպես Հայրենական պա-
տերազմում ընկած բոլոր հերոսների հուշարձան ու
վրան փորագրեց. «Թող էլ ոչ մի ծնող չկորցնի իր որ-
դուն, չլինի պատերազմ», իսկ ամենաբարձր կամարին
քանդակեց խաղաղության աղալնուն:

Երբ աղբյուր-հուշարձանի բացմանը Հայրենական
պատերազմում ընկած զավակներ ունեցող քաղաքի
բնակիչները տեսան Մարգարի յոթերորդ աղբյուրը,
նրանց թվաց, թե իրենց որդիները վերադարձել են պա-
տերազմից, այնքան մեծ արվեստ կար, այնքան ջերմ

զգացմունք և այնքան վեհ իմաստ էր մարմնավորված այդ հուշարձանի խոսող քարերի մեջ:

Պայքարը հանուն նվաճված խաղաղության, այն արժանավոր հուշարձանն է, որ դնում են սովետական ժողովուրդներն ընկածների հիշատակին իրենց ամենօրյա հերոսական աշխատանքով: Գործունեության բոլոր ասպարեզներում նրանք կերտում են այդ հրաշալի հուշարձանը, որի վրա հիացմունքով են նայում աշխարհի աշխատավոր ժողովուրդները:

Աշխատանքը սովետական մարդու համար փառքի և պատվի գործ է, այդ հերոսական աշխատանքով է նա պայքարում հանուն խաղաղության, որովհետև այդ աշխատանքով նա ավելի հզոր և անպարտելի է դարձնում խաղաղության ու ժողովուրդների բարեկամության անառիկ ամրոցը՝ իր մեծ Հայրենիքը:

Բանաստեղծ Սարմենը «խաղաղություն» բանաստեղծության մեջ խաղաղության լագերի ավանգարդում տեսնում է Սովետական Միության աշխատավոր մարդկանց, որոնք «գիշեր-ցերեկ խաղաղություն են կերտում»: Բանվորը՝ «արարչագործ իր բազմակուլ ընթացք տալով նոր կյանքին», կոլտնտեսականը, որը «հաց է տալիս աշխարհին», գիտնականը, որի «բազմազյուտ միտքը» մարդուն պարզեում է «արև ու լույս, եռանդ ու երգ, գարնան վարդեր զվարթուն», Սովետական Բանակի մարտիկը, որը «դյուցազուն պահպանն է արդարության աշխարհի» — նրանք բոլորն ամեն ժամ ու վայրկյան իրենց աշխատանքով և պայքարով կերտում են խաղաղությունը:

Սովետական Միության ժողովուրդներն իրենց նոր կյանքը կառուցող շինարար մուրճերի զարկով մահա-

ցու հարվածներ են տալիս պատերազմի հրձիգներին,
ինչպես գրում է Ս. Կապուտիկյանը.

Բիրտ աղմկում է ընդունիչը գոռ,
Սենյակս են խուժում ալիքներն օտար:
Նույն վայնասունն է, բարբառով տարբեր.
«Ատոմային ումբր, արյուն, պատերազմ...»:

Իսկ դրսում շենք է կառուցվում նորից,
Ու մուրճը խաղաղ զարկում է դրսում.
Այդ՝ խլացնելով աղմուկը հուրի՝
Հայ վարպետն է իր նուրբ քարը տաշում...

Սովետական շինարարի մուրճի խաղաղ հարված-
ները, դա Հայրենական Մեծ պատերազմում հաղթանա-
կած և խաղաղություն նվաճած սովետական ժողովրդի
աշխարհաշինության հզոր հնչյուններն են:

Խաղաղությունը հզոր է, քան պատերազմը, ողջ
աշխարհի աշխատավոր մարդիկ ավելի հզոր են, քան
նրանց հաշվին ուռճացող ամերիկա-անգլիական իմ-
պերիալիստները: Խաղաղության պաշտպանության դիր-
քերում կռվում են իրենց աշխատանքի վաստակի տեր
դարձած Սովետական Միության և դեմոկրատական
ռեսպուբլիկաների ազատ ժողովուրդները: Նրանց պար-
զած խաղաղասիրության և ազատասիրության դրոշի
տակ համախմբվում են կապիտալի լծի տակ հեծող
երկրագնդի ճնշված ժողովուրդները և ողջ աշխարհի
խաղաղասեր մարդիկ:

Խաղաղության համար մղվող համաշխարհային
շարժման ավանգարդի ղինվոր լինելու բարձր գիտակ-
ցությունը խանդավառում և ոգեշնչում է ինչպես Սովե-
տական ողջ Միության, նույնպես և Սովետական Հա-
յաստանի աշխատանքի բոլոր ճակատների հերոսներին:

Նրանց բոլորի հույզերն է արտահայտում էջմիածնի շրջանի Ներքին Զեյլա դյուղի կոլխոզի օղակավարուհի, անվանի շանաքավոր Սիրվարդը՝ Վ. Դավթյանի համանուն պոեմի հերոսուհին.

Եվ Սիրվարդի հայացքի դեմ լուսավոր ու պայծառ
Ողջ աշխարհն է փռվում անեղերք ու անծայր...

... Եվ հպարտ է Սիրվարդը անշափ, որ վաստակն իր համեստ
Օգնելու է խաղաղության գործին հզոր ու վեհ,
Որ բամբակը իր հավաքած՝ սպիտակ ու շաղոտ
Կարող է և կտավ դառնալ, դառնալ և չոր վառող:

Սովետական Հայաստանում, ինչպես և Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում, սովետական մարդիկ խաղաղ և ստեղծագործ աշխատանքով ընթանում են սոցիալիզմից կոմունիզմին աստիճանաբար անցման ճանապարհով, ստեղծելով նորանոր քաղաքներ և ավաններ, ծովեր և գետեր, ջրանցքներ և հիդրոէլեկտրակայաններ, վերածելով իրենց Հայրենիքը հրաշալի այգեստանի:

Սովետական Միության ժողովուրդներն ստեղծել են այնպիսի հասարակարգ, որտեղ աշխատանքը հանդիսանում է համաժողովրդական երջանկության աղբյուր, նրա խաղաղ և ստեղծագործ աշխարհաշինության պատվարը:

Ստեփան Զորյանը նախասովետական տարիներին դրած իր «Խնձորի այգին» նովելում պատմում է «ծառերի լեզուն հասկացող» աշխատասեր և տքնաջան Մարտին ապոր ողբերգական պատմությունը:

Հայաստանի շրջաններից մեկում հայտնի էր Մարտին ապոր խնձորի այգին: Մարտին ապերն աճեցնում էր իր խնձորի այգին՝ հետևելով և խնամելով վաղ գար-

նանից մինչև աշուն, սիրելով խնձորենիները, որպես իր հարազատ զավակներին:

Եթե Մարտին ապերը կարծում էր, որ խնձորի այգին երջանկության աղբյուր կարող է լինել, ապա իրականությունը գալիս ու փշրում է Մարտին ապոր այդ պատրանքը:

Խնձորի այգին, որի մեջ Մարտին ապերը դրել էր իր ողջ կյանքը, դառնում է կովախնձոր: Նրա հարազատ գուտորեն այդ խնձորի այգու պատճառով խորտակում են իր երջանկությունը: Մարտին ապերը մշուշապատ կերպով գիտակցում է, որ այն խնձորի այգին, որը նրա կողմից ընկալվել է որպես երջանկության և բարիքի աղբյուր, ինչ-որ չարիք է պարունակում: Նա վերցնում է կացինը և դիվահարի նման սկսում կտրտել իր այնքան սիրած և պաշտած հրաշալի խնձորենիները:

Իհարկե, Մարտին ապերը հեռու էր չարիքի իսկական արմատները տեսնելուց և ըմբռնելուց, սակայն աշխատանքի պտուղը դժբախտության աղբյուրի վերածող և մարդկային հարաբերությունները աղճատող մասնավոր սեփականության վերացման բնազդն էր խոսում Մարտին ապոր մոտ, երբ նա բացագանչելով՝ «Սրանց համար են նրանք իմ տունը քանդել», ոչնչանում էր իր սիրելի խնձորենիները:

Տրամագծորեն բոլորովին հակառակ բախտի է արժանանում Սովետական Հայաստանի պատվավոր քաղաքացի՝ կոլտնտեսական միջուրինյան Մակար Հակոբյանի խնձորի այգին:

Մակար Հակոբյանն իրենց կոլխոզի 45 հեկտարանոց այգին դարձրել է խնձորենիների այգեստան, որի խնձորներից յուրաքանչյուրը կշռում է 500, 600, 700 գրամ: Կլիմայական խիստ անբարենպաստ պայմաննե-

րում այդ հրաշալի այգեստանն ստեղծող Մակար բիժուանունը հայտնի դարձավ դեռ Հայրենական պատերազմի նախորդ տարին 1940 թվականին, երբ Մոսկվայում, Գյուլատնտեսական ցուցահանդեսում ցուցադրվեցին նրա «ռանեաները», «բելֆլորները» և «ապորտները»: Պատերազմը չընկճեց Մակար Հակոբյանին, նա շարունակում էր իր հերոսամարտը բնության հետ՝ հանուն սովետական մարդու երջանկության և բարօրության: Երբ ավարտվեց պատերազմը, Մակար բիժան 72 տարեկան էր, և չնայած իր տարիքին, նա երիտասարդի խանդավառությամբ աճեցնում էր խնձորի այգին:

Եվ պատահական չէ, որ Մակար Հակոբյանի մասին գրած Վ. Դավթյանի «Զրույց Մակարաշենցի Մակարի մասին» չափածո ակնարկը հնչում է, որպես աշխատանքի և խաղաղության գովերգ ի պատիվ Սովետական Հայաստանի պատվավոր քաղաքացի կոչման սակահատեմ Մակար Հակոբյանի և ի պաշտպանություն խաղաղության.

— Մակար բեռի, ապրես սիրով,
Հասնես ծոռան օրորոցին,

Դու խկական մարդ ես, իրոք,
Կոմունիզմի բաղաբացի:

Իսկ նա լեցուն թասը առած

Շոյել է լուռ բեղերը թավ,

Եվ հայացքը հեռուն հառած,

Այսպես է նա խոսել հանդարտ.

— Խաղաղ լինի աշխարհը թող,

Խաղաղությամբ է հողը շեն,

Խաղաղ լինի, որ ժայռ ու հող

Մեր այս այգու պես կանաչեն...

Եթե Զորյանը «խնձորի այգին» նովելում վերարտադրում էր նախասովետական Հայաստանի տիպական

պատկերը, ապա բանաստեղծ Վ. Դավթյանն իր պոեմում, պատմելով Մակար Հակոբյանի մասին, նրա խնձորի այգու պատկերի մեջ ընդհանրացնում է Սովետական Հայաստանի նոր, երջանիկ կյանքը:

Հակառակ նոր համաշխարհային պատերազմ նյութող ագրեսորների ծրագրերին, օրեցօր ավելի է աճում և ծաղկում այն հրաշալի այգեստանը, որը կոչվում է Սովետական Միություն:

Ամբողջ աշխարհը հրաշալի այգեստանի վերածելու համար պայքարում են աշխարհի ազատասեր և խաղաղասեր ժողովուրդները, որոնց համար սոցիալիզմից աստիճանաբար դեպի կոմունիզմ ընթացող Սովետական Միությունը և սոցիալիզմի ուղին բռնած ժողովրդական Դեմոկրատիայի երկրները հանդիսանում են մշտավառ սիրտ:

Օրըստօրե ավելի է հզորանում և լայնանում խաղաղության բանակը, իր մեջ ներգրավելով խաղաղությանը և ժողովուրդների ստեղծարար համագործակցությանը նրազող նորանոր հազարավոր մարդկանց: Նրանց նպատակն է մեղմացնել լարված միջազգային հարաբերությունները և լուծել միջազգային հասունացած պրոբլեմները բանակցությունների միջոցով:

1953 թ. հունիսին Բուդապեշտում կայացած Համաշխարհային Խորհրդի սեսիան հանդիսացավ խաղաղության բանակի հաղթանակի նոր ապացույցը:

Բուդապեշտի աշխատավորությունը հունիսի 18-ի երեկոյան Կոշուտի անվան հրապարակում հարյուր հազարանոց ցույց կազմակերպեց ի պատիվ խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիայի, իր ձայնը միացնելով սեսիայի որոշումներին: Այդ երեկո Կոշուտի հրապարակում, աշխարհի բոլոր լեզուներով հնչող խա-

ղաղություն բառն արտահայտում էր ամբողջ ժողովուրդ-
ների կամքը՝ պայքարել հանուն ազատ աշխատանքի և
խաղաղ կյանքի:

Ամբողջ աշխարհի պրոգրեսիվ գրողների, նրանց
ավանգարդը հանդիսացող Սովետական Միության,
նրանց թվում նաև սովետահայ գրողների վրա պատ-
մությունը մեծ պարտականություն է դրել՝ բարձրար-
վեստ գեղարվեստական խոսքի միջոցով վերարտադրել
հանուն խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի
մարտնչող մարդկանց հոգևոր գեղեցկությունը, նրանց
բացարձակ ու թաքնված թշնամիներին անարգանքի
սյունին գամել, նպաստել խաղաղասեր ժողովուրդների
վերջնական հաղթանակին:



Պատ. խմբագիր՝ Հ. Մամիկոնյան
 Հրատ. խմբագիր՝ Ա. Խաչատրյան
 Կազմը, ֆորդացը և անվանաթերթերը՝
 Կ. Տիրատուրյանի
 Տեխ. խմբագիր՝ Մ. Կափլանյան
 Կոնտրոլ սրբագրելի՝ Ա. Ալանյան

Հանձնված է արտադրության 19/1 1954 թ., ստորագրված է տպա-
 գրության 9/111 1954 թ., թուղթը՝ $84 \times 108 \frac{1}{32}$, տպագր. 6,5 մամ.,
 հրատ. 2,4 մամ.: Գինը 3 ռ. 45 կ.:

ՎՋ 09137, ԽՀԽ 187, հրատ. 1010, պատվեր 28, տիրաժ 2000

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչու-
 թյան տպարան, Երևան, Արտվյան 124:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031184

A $\frac{11}{31184}$